№ 87 ՇԱԲԱԹ ԱՊՐԻԼԻ 28

1907

ԵՐԵՍՈՒՆՀԻՆԳԵՐՈՐԴ ՏԱՐԻ

ՄՇԱԿ

ՇԱԲԱԹ ԱՊՐԻԼԻ 28 № 87

Տարեկան գինը 10 ռուբլի. կէս տարվանը 6 ռուբլի.
առանձին համարները ԱՄԷՆ ՏԵՂ 5 ԿՈՊԷԿՈՎ.

Թիֆլիսում գրվում են խմբագրատան մէջ.

Մեր հասցէն. Тифлисъ, редакція «Мшакъ».
Базарная ул. д. Тамамшева № 16.
Կամ Tiflis, Rédaction «Mschak».

Տելեֆօն № 253.

Խմբագրութիւնը բաց է առաւօտեան 10—2 ժամ
(բացի կիրակի և տօն օրերից)

Յայտարարութիւն ընդունվում է ամէն լեզուով.

Յայտարարութիւնների համար վճարում են իւրաքանչիւր տողատեղին 10 կօպէկ.

Տելեֆօն № 253.

ՀԻՄՆԱԴԻՐ ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ

ԲԱՑՎԱԾ Է ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ

„ՄՇԱԿ“

ՔԱՂԱՔԱԿԱՆ ԵՒ ԳՐԱԿԱՆԱԿԱՆ ԼՐԱԳԻՐ

ՆԵՐԿԱՅ 1907 ԹՒԱԿԱՆԻ ՀԱՄԱՐ

(35-ՐԴ ՏԱՐԻ)

ԲԱԺԱՆՈՐԴԱԳԻՆԸ. «Մշակի» տարեկան գինը 10 ռուբլի է, տասն և մէկ ամսվանը նոյնպէս 10 ր., տասն ամսվանը՝ 9 ր., ինն ամսվանը՝ 8 ր., 8 ամսվանը՝ 7 ր., եօթ և վեց ամսվանը՝ 6 ր., հինգ ամսվանը՝ 5 ր., չորս ամսվանը՝ 4 ր., երեք ամսվանը՝ 3 ր., մէկ ամսվանը 1 ռուբլի։

ԱՐՏԱՍԱՀՄԱՆԵԱՆ ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ. Ամերիկայի բաժանորդները պէտք է վճարեն տարեկան 6 դոլլար. Եւրոպայի բաժանորդները՝ 30 ֆրանկ. Պարսկաստանի բաժանորդները՝ 10 ռուբլի։

«Մշակին» գրվել կարելի է ԽՄԲԱԳՐԱՏԱՆԸ. (Բազարնայա և Բարօնսկայա փողոցների անկիւն)։ Ստորագրվել կարելի է միայն ամսի 1-ից։

ԲԱԺԱՆՈՐԴԱԳԻՆԸ կարելի է վճարել ՄԱՍ-ՄԱՍ։

Կայսրութեան ուրիշ քաղաքներից «ՄՇԱԿԻՆ» գրվելու համար և առհասարակ նամակներ և ծրարներ ուղարկելիս, պէտք է դիմել հետեւեալ հասցէով. ТИФЛИСЪ, Редакція «МШАКЪ», իսկ արտասահմանից՝ TIFLIS, Rédaction du journal «MSCHAK».

Յայտարարութիւններ ընդունվում են բոլոր լեզուներով։

ԱՊԱՌԻԿ ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ ՉԷ ԸՆԴՈՒՆՎՈՒՄ

Մարիամեան-Յովնանեան Դպրոցի Հոգաբարձութիւնը
յայտարարում է, որ կիրակի, ապրիլի 29-ին, ս. պատարագից յետոյ ժամը 11-ին, Կուսանաց անապատի ս. Ստեփաննոսի եկեղեցում կատարվելու է դպրոցիս հիմնադիր
հանգուցեալ
Յովհաննէս Յովնանեանի
հոգեհանգիստը
(ա.) 1—1

Ներսիսեան Հայոց Ազգային Հոգեւոր Դպրոցի հոգաբարձութիւնը
սրանով յայտարարում է, որ ապրիլի 29-ին, կիրակի օրը Վանքի Մայր եկեղեցում, ս. պատարագից յետոյ, կատարվելու է դպրոցի բարերար
հանգուցեալ
Յովսէփ Էֆէնդեանցի
հոգեհանգիստը
(ա.) 1—2

Յակովբ Մելիք-Բախտամեանը
յայտնում է ազգականներին և ծանօթներին, որ իր հօր
Զաւահիր Մելիք-Բախտամեանի
մահվան տարելիցի առիթով՝ կիրակի ապրիլի 29-ին, Վերայի գերեզմանատան ս. Խաչի եկեղեցում, կը լինի պատարագ և հոգեհանգիստ հանգուցեալի գերեզմանի վրա։ Պատարագի սկիզբն է առաւօտեան ժամը 10-ին։
(ա.) 1—1

Թիֆլիսի Հայուհեաց Բարեգործական Ընկերութեան
Վարչութիւնը
յայտնում է, որ 1907 թ. ապրիլի 29-ին, ցերեկվայ ժամը 12-ին
ՅՈՎՆԱՆԵԱՆ ԴՊՐՈՑՈՒՄ
կատարվելու է
ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ 25-ԱՄԵԱՅ ՅՈԲԵԼԵԱՆԸ
Մուտքը հրաւիրատոմսերով։ Յոբելեանի օրը կարդալ կամ խօսել ցանկացողները վաղօրօք կարող են դիմել կարգադրիչ յանձնաժողովին կար ու ձևի արհեստանոցում Գանօվսկայա № 19, իսկ յոբելեանի օրը Յովնանեան դպրոցում։
առ. 1—2

Թիֆլիսի Քաղաքային Վարչութիւնը
յայտնում է ընդհանրութեան, որ 1907—1911 քառամեակի համար Թիֆլիսի քաղաքային խորհրդի ձայնաւոր ընտրողների առաջին ընտրողական շրջանի (1, 2, 3 և 4) վերջնական ցուցակների տպագրված օրինակները նոյնպէս ընտրութիւնները կատարելու կանօնները և հրահանգներն ու ձայնաւորների թեկնածուների անունը գրելու բլանկները, կարելի է ստանալ քաղաքային վարչութեան գլւանում սոյն ապրիլի 27-ից ամեն օր առաւ. 10—3 ժ. բացի կիրակի և տօն օրերը։
(ղ.կ.ե.) ա. 1—3

Թիֆլիսի Քաղաքային Վարչութիւնը
յայտնում է պ. պ. վաճառականներին, որ նրանցից ոմանք ցենզաւոր կայքեր ունին, բայց, որովհետև գնահատման հարկի պարտքեր ունին, ուստի հանվում են անշարժ կայք ունեցողների ցուցակից։ Իսկ քանի որ նրանք սխալմամբ գրված են նախնական ընտրողական ցուցակների մէջ իբրև առևտրական ցենզաւորներ, այժմ պիտի հանվեն այն բոլոր ընտրողները, որոնք սխալմամբ են ցուցակագրված։ Այդ պատճառով քաղաքային վարչութիւնը վերջիններիս խնդրում է
ՇՏԱՊԵԼ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՀԱՐԿԻ ՊԱՐՏՔԵՐԸ ՏԱԼՈՒ
Երկրորդ ընտրողական շրջանում ժամանակ է տրվում մինչև 1907 թ. մայիսի 2-ի երեկոն, երրորդ ընտրողական շրջանում մինչև մայիսի 9-ը։ Ով քաղաքային խորհրդի ձայնաւորներ ընտրելուն ցանկանում է մասնակցել, պիտի շտապի։
(ղ.կ.ե.) ա. 1—3

ՁԱՏԿԱԿԱՆ
ՑԱՐՄԱՐ ՆՈՒԷՐ
Կենտրոնական Նպաստամատոյց Յանձնաժողովի՝
Յօգուտ ՀԱՅ արկածեալների
ՍՏԱՑԱԾ ՇՔԵՂ
„ԳԵՂՈՒՆԻՆ“
կարելի է ձեռք բերել «Գուտտենբերգ» գրախանութում, «ՄՇԱԿԻ» և «ՓԱՅԼԱԿԻ» խմբագրատներում։ Գինն է 4 ր. ճանապարհածախսով 4 ր. 40 կ.։
ա. 2—5

ԿԱՆԱՆՑ ՀԻՒԱՆԴՈՒԹԻՒՆՆԵՐԻ ԲԺԻՇԿՆԵՐԻ ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ
ՀԻՒԱՆԴԱՆՈՑ
Անաստասևվսկայա փողոց, տուն № 18, հեռախօս 966։
Հիւանդ կանանց ընդունելութիւնը ամեն ժամանակ նախօրդ յայտարարութեան համաձայն։
Երթևեկ հիւանդների ընդունելութիւնը ամենայն օր ցերեկվայ ժամը 11—12, հետևեալ բժիշկների ձեռքով.
Ա. Ր. Ֆիշեր.—երեքշաբթի, շաբաթ։
Ա. Գ. Բարսուկով.—չորեքշաբթի։
Ս. Գ. Շահ-Պարոնեան.—կիրակի, հինգշաբթի։
Ա. Ա. Նովիցկի.—երկուշ. ուրբաթ։
Երեխաների հիւանդութիւնների համար Ն. Զ. Ումիկովը հիւանդ երեխաներին ընդունում է երկուշաբթի և հինգշաբթի օրերը, 2—3 ժ.։
Հիւանդանոցին կից կատարվում են քիմիկօ-միկրօսկոպիական հետազօտութիւններ՝ մէզի, խորխի և այլն։
Ծծմայրերի քննութիւն, ծաղկի պատուաստում և այլն։
(հ. շ. ե.) 30—50

ԲԺԻՇԿ
Ա. ՄԽԻԹԱՐԵԱՆՑ
ՄԱՍՆԱԳԷՏ
սիֆիլիս, միզային, վեներական եւ մորթու
հիւանդութիւնների։
Ընդունում է ցերեկ. 1—3 ժ., երեկ. 6—8 ժ.
Սօլօլակ, Բեհբութեան փող. № 33։
(ա. օ.) առ. 46—50

ՇԱՐՈՒՆԱԿՎՈՒՄ Է
„ՍԱՓՐԻՉ“
հումօր, սատիրիկ-սիմվօլիք
ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆԸ
Լոյս տեսաւ
VI-րդ համարը,
որը և ուղարկվեց բաժանորդներին նաև
„ԱՆԻ“
հրատարակչ. ընկեր. բաց նամակների I սերիան, 8 հատ, գինն է 60 կոպ.։
Բաժանորդներին ուղարկվեց ձրի իբրև «Սափրիչի» 1 պրեմիան։
Տարեկան բաժանորդագինն է պրեմիայով 2 ռուբլի, իսկ Անդրկասպեան երկրի և արտասահմանի համար 2 ռուբլի 50 կոպ.։
Հասցէ՝ С. П. Б. Казанская 46 18.
«ՍԱՓՐԻՉ»-ի խմբագրութիւն
ե. շ. առ. 20—25

ԶԱՏԿԱԿԱՆ
վայելուչ ընծայ
ՅԻՍՈՒՍ ԽԱԶԱԿԻՐ
ընտիր եւ նուրբ մեծադիր նկար
Պատրաստված Պարիզում
(ակւաթինտ.)
Գինը մինչեւ Զատիկ
ԱՂԲԻՒՐ ԵՒ ԳԵՂԱՓՆՁԻԿԻ բաժ. համար 2 ր.
Հայ պար. միւս բոլոր թեր. համար 2 ր. 50 կ.
Հայերէն ոչ մի թերթ չստացողների համար 3 ր.
Զատկից յետոյ անխտիր ամենքին համար 5 ր.
Հասցէն՝ Тифлисъ, Редакція «Агбюръ»—«Таразъ» ա. ա. օ. 9—10

Լոյս տեսաւ եւ ծախվում է
ԱՐԵԱՆ ՁԱՅՆԵՐ
երրորդ տպագրութիւն
փոփոխված, ճոխացրած, 224 երես
ԳԻՆԸ 50 ԿՈՊԷԿ
Դիմել՝ Թիֆլիս «Գուտտենբերգ» և «Փարոս» գրախանութները, Երևան՝ Ս. Օհանջանեանին, Բագու՝ Բունիաթեանցի գրախանութը հայոց եկեղ. կից, Կարս՝ Եղբ. Մկրտումեաններին։
Մեծ քանակութեամբ գնողներին զգալի զեղչ։ Ստ. Մ.-Սողոմոնեան, Тифлисъ Успенская ул. № 3.
(ա. օ.) առ. 4—10

ԹԵՄԻՐ-ԽԱՆ-ՇՈՒՐԱՅԻ ՀԱՄԱՐ
հարկաւոր է
ՄԻ ՑԵՆԶԱՒՈՐ
ՔԱՀԱՆԱՅ
Պայմանների մասին դիմել՝ Т.-Х.-Шура, армянскому попечительству.
առ. 3—3

Կարսում հիմնվելիք փոխադարձ
ՎԱՐԿԻ ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ
ՄԱՍՆԱԺՈՂՈՎԸ
խնդրում է այն անձանց, որոնք ցանկանում են ստանձնել ընկերութեան գլխաւոր հաշուապահի պաշտօնը, դիմել իրանց մանրամասն պայմաններով Կարս Ամբրոսիոս Գրիգորեան Սրբոշիկեանին։ (ա.օ.) առ. 3—3

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Տարվայ բերքը. Վերջին տեղեկութիւններ. Մի հարցի առիթով. Օգնութեան գործը. Մամուլ. Գաւառացու կեանքից. Օրվայ խնդիրներ. Բժշկի կարևորութիւնը մեր գիւղերում. Ողբերգական դրութիւն. Իմ խօսքը. Նուխու դպրոցների մասին. Նամակ Նոր-Բայազետից. Պէտք է մաքրել. Նամակներ խմբագրութեան. Ներքին լուրեր. Ոստիկանական տեղեկութիւններ. ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ— Նամակ Պարսկաստանից Արտաքին լուրեր. ՀԵՌԱԳԻՐՆԵՐ. ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ.

ՏԱՐՎԱՅ ԲԵՐՔԸ

I

Աշխատանքը եռում է մեր գիւղական աշխարհում։

Հողագործը ամեն միջոց գործ է դնում ցանքսեր անելու և իր քայքայված տնտեսութիւնը իր նախկին դրութեան մէջ դնելու։

Բայց կան և այնպիսի գիւղացիներ, որոնք մնացել են սեփական տնտեսութիւնից դուրս և թափառում են ուրիշ տեղերում։ Այդպէս են օրինակ Զանգեզուրի գաւառի Ալիղուլի-շէն, Հարար և ուրիշ գիւղերի բնակիչներից շատ տներ։ Այդպէս են Ղազախի գաւառի Կրզան գիւղի բնակիչները, որոնք չեն վերադարձել իրանց գիւղը, ցրվել են Շամշադինի [illegible] ցանքսեր ուրիշների հողերի [illegible] են անում այդ թոյլ են տալիս միջոցները։

Եթէ հաշւի առնենք, որ գիւղացիների մի ստուար մասը անկարող է լինելու այնքան սերմ գցել իր արտերում, որքան այդ արել է նա նախկին տարիները, կը տեսնենք, որ առաջիկայ բերքը առանձին մտահոգութեան և հետաքրքրութեան առարկայ պէտք է լինի մեզ համար, որովհետև այդ բերքի որակից և քանակից է կախված մեր երկրի ուտելու մթերքների պաշարի վիճակը։

II

Եթէ տարվայ բերքը նպաստաւոր լինի և սերմանած արտերը տան առատ հունձ, այն ժամանակ, որքան էլ ժամաւոր դէպքերում քիչ լինեն գիւղական ցանքսերը, ընդհանուր հաշւեգումարում երկիրը կունենայ բաւական պաշար իր կարիքների համար և կը մնայ մտածել միայն նրանց մասին, որոնք առանձին նեղութեան մէջ են գտնվում։

Իսկ եթէ ցանքսերը կենթարկվեն դժբաղդութիւնների ազդեցութեան, եթէ մի տեղ երաշտը կամ կարկուտը և ցուրտը կը փչացնեն արտերը, մի ուրիշ տեղ մորեխի և դաշտամկների արշաւանքները կամայացնեն դաշտերը, մի երրորդ տեղ զանազան հանգամանքներ խոչընդոտ կը լինեն գիւղական տնտեսութեան կանոնաւոր ընթացքին, այն ժամանակ տարվայ բերքը կը ստացվի պակաս և մենք կանգնած կը լինենք նոր ցաւերի, նոր աղէտների առաջ։

Սոսկալի է նոյն իսկ երևակայել այդպիսի մի դրութիւն։

Եւ մեզնից իւրաքանչիւրը աշխատում է իրանից հեռացնել աննպաստ և անմխիթարական մտապատկերները, բայց նախատեսել ամեն պատահմունք և դրութիւն ներկայ կարևոր գործի մէջ անհրաժեշտ է և մենք պէտք է ուշի ուշով հետևենք մեր գիւղական կեանքի հանգամանքներին։

III

Մինչև այժմ ստացած մեր տեղեկութիւնները ցանքերի վիճակի մասին մխիթարական են։

Աշնանացանը լաւ է բուսել և բաւական աճել է։ Գարնանացանը արդէն սկսել է երևալ։

Տեղ-տեղ անձրևի պակասութեան պատճառով հողը ցամաքել է և եթէ նա ջրի երես չը տեսնի մի քանի ժամանակ էլ, կարող է կորցնել իր բերքի մի մասը։ Մի քանի գիւղերում դաշտամկները կրծել են ցանքսերը և կերել են մարգագետինների խոտերը։ Կարկուտների մասին դեռ գուժեր չը կան ոչ մի տեղից։

Շատ կարևոր է, որ մեր գաւառական թղթակիցները պարբերաբար տեղեկութիւններ տային մեզ տարվայ բերքի մասին զանազան կողմերից և հնարաւորութիւն տային մեր հասարակութեանը հետևելու մեր գիւղական աշխարհի որպիսութեանը։

Անշուշտ բոլորիս տենչանքն է տեսնել մեր գիւղացուն ոտքի կանգնած և իր նիւթական անհրաժեշտ կարիքների հոգսերից անցած կուլտուրական պահանջների բաւարարութեան. բայց ինչ կասէ մեզ ամառը, ինչ կը տայ մեզ տարվայ բերքը։

Դա էական հարց է և մենք հետաքրքրված ենք նրանով։

Ա. Քալանթար

ՎԵՐՋԻՆ ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆ

Բագու, 26 ապրիլի.—Նաւային ծառայողների գործադուլը վերջնականապէս վերջացաւ։

(«Հ. Գ.»)

ՕԳՆՈՒԹԵԱՆ ԳՈՐԾԸ

I

Նպաստամատոյց Յանձնաժողովը, ինչպէս ասացինք, յատկացրեց Աբարանի հայ կարօտեալների համար 10,000 ռուբլի։ Կառավարութիւնն էլ նշանակել է հայ և Թուրք ազգաբնակութեան համար 28,000 ռուբլի գումար, որի, յայտնի չէ թէ որ մասը կը տրվի հայ գիւղացիներին։

Իսկ կարօտութիւնը մեծ է և եթէ վերցնենք այն ցուցակը, որ կազմել է Աբարան ուղարկված Ս. Գրիգորեանը, կը տեսնենք, որ սերմացուի և ուտելիքի համար Աբարանի 27 գիւղին անհրաժեշտ է 18,840 պուդ հացահատիկ։

Ահա այդ թւերը։

գիւղեր	պուդ	գիւղեր	պուդ
1. Բաշաբարան	3000	15. Սաչլու	300
2. Ղզնաֆար	2100	16. Մոլլաղասում	300
3. Շիրաղալա	1800	17. Դամջլու	300
4. Բազարջուղ	1500	18. Ջամըլու	300
5. Բլխեր	1200	19. Գիւլափլու	300
6. Ղալաշա	900	20. Իմըլու	300
7. Ղարանլուղ	900	21. Ղարաքուլաղ	240
8. Մելիքքենդ	900	22. Սաղմոսավանք	222
9. Ալիքուչագ	900	23. Թաքիարլու	150
10. Իլանչալան	780	24. Աստուածընկալ	150
11. Սամաղարվեչ	600	25. Միւլքի	150
12. Ափնագիւղ	600	26. Նորաշէն	90
14. Ղարաքիլիսա	300		

Ընդամենը 18-840 պուդ հացահատիկ, որի կէսը սերմացուի, իսկ միւս մասը ուտելիքի համար։

Եթէ հաշւենք, որ հացի պուդը միջին թւով 1 ր. 50 կ. է, կը տեսնենք, որ անհրաժեշտ է 28,260 ռուբլի։

II

Դա կարիքի նուազագոյն յայտարարն է։

Մի ուրիշ մանրամասն կազմված ցուցակի համաձայն, առաջին եօթ գիւղում, որոնք ամենքից շատ են վնասված, հարկաւոր է սերմացուի համար 20,490 պուդ, ուտելիքի համար 24,491 պուդ, ընդամենը 48981 պուդ հացահատիկ՝ 69,549 ռուբլի արժողութեամբ։

Արդարև առաջին ցուցակ կազմելու ժամանակ ամեն մի կարիքաւոր շնչի վրա հաշւած է 1 և կէս պուդ հացահատիկ սերմացուի և 1 և կէս պուդ ուտելու համար մինչև հունձի ժամանակը. իսկ դա շատ փոքր թիւ է։

Ցաւալի է արձանագրել, որ Բաշաբարան գիւղում հացը միևնոյն ժամանակ վնասակար ազդեցութիւն ունի մարդկանց, մանաւանդ մանուկների վրա։ Հացը ուտելուց և մի երկու ժամ անցնելուց յետոյ զգացվում է թուլութիւն, գլխացաւ, երբեմն ուշաթափութիւն։ Յայտնի չէ հիւանդութեան պատճառը։ Արդեօք «գիժ ցորեն» կոչված հացահատիկն է առատ եղել դաշտերում այդ տարի, թէ սնկային հիւանդութիւններ են եղել տարածված հասկերի վրա, չէ պարզված։ Վարակիչ հիւանդութիւններ դեռ չեն նկատված։

Այսպէս է Աբարանի դրութիւնը։

Ա. Ք.

ՄԻ ՀԱՐՑԻ ԱՌԻԹՈՎ

Մենք կարևոր ենք համարում կանգ առնել «Փայլակ» լրագրի վերջին համարի № 13-ի «Մամուլի» բաժնի վրա։

Այդ բաժնում առաջ են բերված «Դրօշակ» լրագրից մի քանի կտորներ և նրանց առիթով արված են մի քանի նկատողութիւններ ու մեկնաբանութիւններ։

Թէ «Դրօշակ» լրագրի և թէ «Մամուլի» բաժնի խորհրդածութիւնները վերաբերում են թիւրքական կառավարութեան վերաբերմունքին դէպի հայերը։

Նրանք ասում են թէ թիւրքաց կառավարութիւնը պատրաստվում է նոր դժոխային դաւեր տալ հայերին, նոր յարձակումներ գործել հայերի վրա։ Եւ այդ նպատակով նա յուզում է զանազան տեսակ դաւեր, աշխատելով առիթներ ստեղծել իր յարձակումների ու ջարդերի համար։

Որ թիւրքական կառավարութիւնը կարող է դաւեր և պրօվօկացիաներ նիւթել—դա զարմանալի չէ։ Բայց որ չը պէտք է այդ պրօվօկացիաներին զոհ դառնալ—դա էլ շատ պարզ և տրամաբանական է։

Եթէ մէկը դաւեր է սարքում, պրօվօկացիաներ է անում և առիթներ է որոնում և եթէ այդ հանգամանքը ձեզ յայտնի է դարձել, այն ժամանակ ձեր վրա մի պարտաւորութիւն է ծանրանում.—այդ դաւերին կերակուր չը տալ, պրօվօկացիաները իսկոյն մերկացնել և չքացնել, իսկ առիթներից խուսափել։

Այդպիսով դուք կը խորտակէք մեքենայութիւններն ու չարամիտ դաւադրութիւնները։

Իսկ ինչ կը լինի, եթէ դուք պրօվօկացիաներին զոհ դառնաք և նրա աջողութեան համար կերակուր մատակարարէք ձեր կողմից։

Եթէ ձեզ դրդում են որոշ ներգործական քայլեր առաջ բերելու համար, եթէ ձեզ կեղծ ձեռնոցներ են գցում ձեզ հրապարակ հանելու համար, դա դեռ չէ նշանակում թէ դուք պէտք է այդ քայլերն անէք և կռւի կոչերին պատասխանէք անմիտ խիզախութեամբ։

Իսկ «Փայլակը» ահա ինչ է ասում։

Իր գոյութիւնը, Ապրելու Իրաւունքը վտանգված տեսնող ժողովրդի լայն, մասսայական կազմակերպումը և ընդհանուր զինման հրամայական պահանջն է հրապարակ նետում այդպիսի իրականութիւնը։ Ահա թէ ինչ է պակաս մեր ժողովրդին։ Յեղափոխական կազմակերպութիւնը կանգնած է իր կոչման և պատմական վեհ միսիայի բարձրութեան ու պատասխանատուութեան գիտակցութեան վրայ. այդ տեսակէտից կը լարէ իր բովանդակ մարտական և կազմակերպական ույժերը։ Բայց որչափ նա ուժեղ լինի, անկարող է ամեն տեղ հասնել, ամենքին զէնք մատակարարել և առաջադրված բոլոր պահանջներին բաւարարութիւն տալ։ Դա պէտք է զգայ ինքը ժողովուրդը,—և այդ պակասը ինքը լրացնի։

Թիւրքական պրօվօկացիաները ցրելու համար հարկաւոր են, արդարև, միջոցներ. բայց ոչ այն տեսակ սպառնալիք-կտորում։

Ինչո՞ւ չը կարծել, որ թիւրքական պրօվօկացիան հէնց այդ տեսակ տողերի է տենչում. Եթէ պրօվօկացիայի դաւերը ցրելու համար չունենք աւելի էական միջոցներ, գոնէ չը մատուցանենք արջի ծառայութիւններ։

Ա. Ք.

ՄԱՄՈՒԼ

Դումայի գնդիակ նիստում պատգամաւոր Զոհրաբեանի ճառի առիթով պատահած միջադէպի մասին մայրաքաղաքի համարեա ամբողջ մամուլը արտայայտեց իր կարծիքը։ Ակներև է, որ այդ միջադէպում պարտութիւն կրեց օպօզիցիան և աջակողմեան մամուլը յոխորտանքով ու գրգռված է խօսում դրա մասին։ Նախորդ համարում մենք արդէն առաջ էինք բերել «Нов. Вр.»-ից մի քանի քաղուածքներ, որոնք բաւականաչափ բնորոշում են նրա ու մի յայտնի շրջանի մտածողութեան եղանակը, թէ՛ու ազգայնամոլ վերաբերմունքը դէպի այդ տխուր միջադէպը։ «Русь» լրագիրը հետևեալ խորհրդածութիւններն է անում միևնոյն հարցի վերաբերմամբ.

Պատգամաւոր Զոհրաբեանի խօսքերի շուրջը չէ դադարում լրագրական աղմուկը։

Այն եղանակը, որով արտասանված էին նրանք, ի հարկէ, քննութեան չեն ենթարկվում։ Միայն նա, ով անձամբ լսել է նրանց, կարող է դատողութիւն տալ այդ մասին, բայց ճառախօսի արտայայտած միտքը, եթէ միայն նա ստոյգ է հաղորդված մամուլին՝ զօրքի համար վիրաւորական ոչ մի դիտաւորութիւն չէ պարունակում իր մէջ։ Մինչդեռ բիւրօկրատիայի և աջակողմեան մամուլի մէջ ուռնահարում են պատգ. Զոհրաբեանի արտասանած խօսքերի բուն իմաստը։

Զօրքի առաջնորդներին պախարակելը, ամենևին դեռևս չէ նշանակում վիրաւորել զօրքը ևս։

Ֆրանսիական պատգամաւորների պալատի ծայրահեղ աջակողմը, այսինքն, ազգայնականները, որոնք ամենից աւելի բարձր են դասում զօրքը և նրա պատիւը, միշտ յայտնում են թէ պարլամենտական ամբիոնից և թէ ամեն կողմից, որ այս կամ այն մինիստրի հետ, այս կամ այն կառավարութեան հետ զօրքին և նրա ույժին լուրջ վտանգ է սպառնում։ Սակայն ոչ ոք չի էլ կարող մտածել մեղադրել նրանց զօրքի պատիւը վիրաւորելու մէջ, [illegible]։

Ընդհակառակը, ազգայնականները իրանց մշտական հոգացողութեան առարկայ են դարձնում նրա պատրաստականութեան գործը, մատնանշում են նրա թերութիւնները և զօրքի հոգու մէջ տեսնում են իր հայրենասիրական պարտականութիւնը։

Իսկ մեր բիւրօկրատները, Րեդիգերը և միւս մինիստրները, ինարկէ, կարող էին վիրաւորվել, ինչպէս որ նրանք միշտ էլ վիրաւորվել են և վիրաւորվում են իրանց դէմ ուղղված քննադատութեան ամեն մի ճշմարիտ խօսքի համար։

Լրագիրը հաւանական է համարում, որ բիւրօկրատները այդ միջադէպով ոչ միայն ցանկանում էին թաքնվել զօրքի թիկունքի ետևում, այլ և փորձ էին անում «զօրքը գրգռել ժողովրդական ներկայացուցչութեան դէմ, Պետական Դումայի դէմ»։ Այդ դէպքում, արդեօք իրաւունք չունենք կասկածելու որ «Нов. Вр.» նոյն իսկ ճշտութեամբ չէ հաղորդել Զօհրաբեանի փրազան. և այդ կասկածը կարող է փարատվել միայն այն ժամանակ, երբ հասարակական խոշոր բնաւորութիւն ունեցող այդ միջադէպը պարզելու և հասարակական կարծիքը հանգստացնելու համար ստենօգրաֆիական արձանագրութիւնից հաղորդվէր Զօհրաբեանի ճառի այն կտորը, որ վիրաւորական է համարվում զօրքի համար։

*

Փոթորկից անմիջապէս յետոյ վրա հասան զատկական արձակուրդները։ Ճնշված սրտով պատգամաւորները ցրվեցին իրանց տները, յոգնած ու տանջված։

Դումայի գոյութեան ութ շաբաթները, ինչպէս ճիշտ նկատում է «Товарищъ»-ը, անցան

անընդհատ երկւղի մէջ։ Կաբինետը այդ ամբողջ ժամանակամիջոցում ոչնչով չը փոխեց դեռ առաջին օրից պարլամենտի վերաբերմամբ ընդունած իր տակտիկան։ Հէնց որ մի որևէ լուրջ հարց էր ծագում, իսկոյն պաշտօնական լրագրներում անշեղ կերպով լոյս էին տեսնում լուրեր Դուման ցրելու հնարաւորութեան մասին։

Բոլոր կարգի պաշտօնական թերթերը առանձին կրքոտութեամբ գրոհ էին տալիս Դումայի դէմ հարցապնդումների պատճառով։ Նորից կրկնվեցին սովորական մեղադրանքները, սկսած յեղափոխականութիւնից մինչև անընդունակութիւնը։ Վերջին ժամանակներս մեղադրական այդ «անժխտելի» ապացոյցների վրա աւելացաւ մէկը ևս,—«հարցապնդումները աննպատակ են»։ Նրանք միայն ժամանակ են խլում, մինչդեռ ոչնչով չեն պարտաւորեցնում կառավարութեանը։

Չը նայելով այդ բոլոր խոչընդոտներին Դուման շարունակեց աշխատել և չէ կարելի ասել, որ նրա աշխատանքները ապարդիւն են անցել։ Նոյնիսկ աւելի է արված՝ քան թէ սկզբից կարելի էր սպասել։ Ինչպէս ճիշտ նկատում է «Рѣчь» լրագիրը,

Աջողութեամբ մաքառելով այն բնական թշնամական տրամադրութեան դէմ, որը առաջացել է ժողովրդական ներկայացուցչութեան նկատմամբ փրակցիաներից շատերի մէջ երևան եկած արխիբիւրօկրատական վերաբերմունքի պատճառով, արժանապատուութեամբ անցնելով բիւրօկրատիայի բազմաթիւ գործողութիւնների մօտից, որոնք կարծես թէ գիտութեամբ ստեղծվում էին ժողովրդական ընտրեալների զայրոյթը գրգռելու համար, Դուման աշխատում էր ներկայ կառավարութեան հետ յանուն պետական շահերի։ Բոլորովին չը թագցնելով իր վերաբերմունքը դէպի անպատասխանատու բիւրօկրատական կաբինետը, Դուման ցոյց տուեց ընդունակութիւն տարբերել պետական պահանջներին բաւարարութիւն տալու անհրաժեշտութիւնը ժամանակակից իշխանութեան ղեկավարների դէմ ցոյցեր անելու յափշտակութիւնից։ Եւրոպական ամենապահպանողական սահմանադրականութեան տեսակէտից Դուման ամենափոքր իրաւունք անգամ չը տուեց կառավարութեանը յայտնելու, որ Դումայի հետ աշխատել անկարելի է, բիւջեթը մանրամասնօրէն յանձնելուց յետոյ, զինուորակոչութեան օրէնքը ընդունելուց յետոյ մի այդպիսի յայտարարութիւն կառավարութեան կողմից՝ Եւրոպայում կարող է ընդհանուր զարմանք միայն առաջ բերել։

Կրկնում ենք, այդ բոլոր անբարեյաջող պայմաններում անգամ Դուման նոյնիսկ կառավարութեան տեսակէտից մինչև այժմ եղել է միանգամայն աշխատանքի ընդունակ և լօյալ։

[illegible]

—

Գրեմ, բայց ինչ գրեմ. ձրն ասեմ. ինչից սկսեմ. խօսքս գիւղացու ներկայ դրութեան մասին է. Նրա ցաւերն ու տանջանքներն այնպիսի արագութեամբ են յաջորդում իրար, որ, ինչպէս ասում են, հինը հնին կոխել է, նորը հնին ծածկել է, ոչ սկիզբը կարելի է մատնացոյց անել, ոչ վերջը գտնել. հարուածը մեծ թափով հետևում է հարուածին և գիւղացուն տափակացնում, չորացնում, քամում է։ Անցէք Հին-Նախիջևանի գաւառի լեռնոտ մասերը, ուր դեռ թագաւորում է ձիւնը, առանձնապէս Ղարաբաբայի հասարակութեան գիւղերը. մարդիկ դժգոյն, գլխակոր, յաճախակի հոգոցներով են դուրս ժայթքում սրտներին դիզացած մաղձը. Նրանք յուսահատված են ամեն կողմից. անխիղճ են ու անգութ ոչ միայն մարդիկ, այլև բնութիւնը, Աստուած։ Բաւական չէ, որ հաց չը կայ, փողը քաղցածութիւնից վեց-վեց է անում, ձիւնն էլ չէ հալվում, որ մարդ գոնէ խոտով օրը անցկացնէ։ Բաւական չէ այն, որ հագին շապիկ չը կայ, ոտքերին գուլպա, գոմում եզ չը կայ, գրպանում փող, ամբարում սերմացու չունի, փայտանոցում աթար, պահանջներ են անում գիւղացուց, պահանջներ ապօրինի ու անխիղճ։

1905 թ. անմիտ հայ-թուրքական ընդհարումներից ամենից շատ տուժեց Նախիջևանի գաւառը, առանձնապէս հայ գիւղերը. հազարների տէր գիւղացին օրվայ հացի կարօտ մնաց։ Այսօր էլ տեղային վարչութիւնը իր ապօրինի կարգադրութիւններով ու պահանջներով քանդում է ժողովրդի տունը. ամեն մի պօլիցիական պաշտօնեայ և այլ իշխանաւոր կատարում է իր քմահաճոյքը և ազատ է պատասխանատուութիւնից։ 1906 թւի հարկի թւում հաւաքված էր աւելորդ փող մօտ 800 րուբլի, բաւականին մեծ գումար։ Խնդիրներով դիմեցինք ուր հարկաւոր է։ Մինչև օրս քնացրին, ասելով որ քննութիւն կը լինի. ուտողը կերաւ, փողը մէջտեղից փչացաւ։

Այդ թւի հարկի հաշիւները չը վերջացրած, պահանջում են 1907 թւի հարկը. և ինչ հարկ. բանից դուրս է գալիս, որ մեր ժողովուրդը պարտաւոր է տարեկան շարունակ կերակրել ու գլուխ խոնարհեցնել իրան թալանողներին, իր միջի աւազակ ու լիրբ մարդկանց, որոնց Նախիջևանի պօլիցիան այսօր պաշտօնի է կոչել։

Ամսիս 9-ին հաշտարար միջնորդը Ղարաբաբայի հասարակութեան գիւղերից (28 գիւղ 21 թուրք, 7 հայ) մարդիկ էր կանչել ստորագրութեամբ հաստատելու հարկի ցուցակները։ Բացի հողային հարկից, հասարակական դատարանական սովորական ծախքերից, այս տարի աւելացրել են տանուտէրների, գրագիրների ռոճիկը, դատարանին արտակարգ ծախք. այսպէս թուրք տանուտէրին նշանակված է 800 րուբլի. (այդ տանուտէրը Կարաբէգն է, Նախիջևանի հերոսներից մէկը հայ-թուրքական ընդհարումների ժամանակ, որը երեք ամիս էլ դաշաղ ընկաւ կաղեօնի հրացանով Պրինց Նապօլիօնի գեներալ նահանգապետութեան օրով Երևանում։ Սակայն յետոյ տանուտէրի պաշտօն ստացաւ). Թուրք գրագրին 600 րուբլի. հայ տանուտէրի օգնականին 500 րուբլի, սրա գրագրին 120 րուբլի։ Հայ-թուրքական ընդհարումներից առաջ Ղարաբաբայի հասարակութեան 27 գիւղը ունէր մի տանուտէր և մի գրագիր. առաջինը ստանում էր 400 րուբլի, երկրորդը 500, ընդամենը 900 րուբլի. մինչև այսօր այդ պաշտօնների համար տրվում է 2020 րուբլի, 1120 րուբլի աւելի։

Ընթերցող, երևի կասրկես. որովհետև հայ գիւղերին նրա տեղական կարիքներին բաւարարութիւն տալու համար առանձին տանուտէր ու գրագիր է նշանակված, ուստի ծախքերն աւելացել են. այստեղ հեգնութիւնն այն է, որ հայ տանուտէրն ու գրագիրը նշանակված են միմիայն պօլիցիայի պահանջները կատարելու համար, որովհետև թուրք տանուտէրը հայ գիւղերը չի գնում. իսկ վերջինները իրանց բոլոր գործերով ենթարկվում են թուրք տանուտէրին, որպէս իսկականին։ Պարզ է, որ հայ տանուտէրի և գրագրի պաշտօնը բոլորովին աւելորդ բեռ է հասարակութեան համար, քանի որ ժողովրդին երբէք պէտք չեն գալիս։ Շինական դատարանից արտակարգ ծախք են նշանակել 500 րուբլի այն պատճառով, որ յիշեալ ընդհարումների ժամանակ, որպէս թէ նրա միջի իրեղէնները գողացվել, թալանի են ենթարկվել։

Այդ դատարանը գտնվում է Շահբուզ թուրք գիւղում, իսկ այդ գիւղը յարձակման չէ ենթարկվել հայերի կողմից, իսկ թուրքը թուրք գիւղի վրա յարձակվել, կարծեմ, երբէք չէր կարող։ Թուրք տանուտէրն ու մանաւանդ գրագիրը միշտ եղել են դատարանում։ Ապա ով է տարել դրա իրեղէնները. պատասխանը պարզ է։

Սակայն հաշտարար միջնորդը առանց քննութեան այդ էլ է գցում հասարակութեան վրա, ուշք չը դարձնելով թուրք ներկայացուցիչների խօսքերին, որոնք պնդում էին և հաստատում, որ իրեղէնները գրագրի և տանուտէրի մօտ են։

27 գիւղի ներկայացուցիչները հայ և թուրք միաձայն գոռում էին, որ աւելորդ և անտեղի են այդ բոլոր ծախքերը. մարդիկ կոտորվում են քաղցից. փոխանակ նպաստ տալու և եղած ծախքերը քչացնելու, նորեր աւելացնում են։ Թուրքերը կանաչ եօնջան լցնելով հաշտարար միջնորդի առաջ, ասում էին—ահա այս է մեր կերածը, ինչ էք պահանջում մեզանից։

Բիւրօկրատ պաշտօնեան այդ ստոյգ խօսքերին—я ничего не знаю—ասելով պնդում էր, որ ստորագրեն ներկայացուցիչները։

Ներկայացուցիչները պահանջ դրին, որ կատարվի տանուտէրի ընտրութիւն, քանի որ այդ նրանց խոստացված էր դեռ անցեալ օգոստոսի վերջին. ծանր է նրանց համար կառավարվել նշանակովի կառավարչական տանուտէրներով։ Պօգրոմաւէր պաշտօնեան պատասխանում է.—Կարելի է դուք (թուրք և հայ) մայիսին նորից կուեք։

Գայլը ամպ օրը կուրախանայ, ասում է առածը։ Մինչ գիւղական ներկայացուցիչները ցրում են առանց ստորագրելու հարկի ցուցակը, դոռոզ պաշտօնեան առարկում է.—и безъ нихъ дѣло пойдетъ.

Այնպիսի դրութեան մէջ ենք գտնվում, որ ժողովրդի, գիւղական դասակարգի ձայնը տում են նրա վզին և ծծում արիւնը. և այդ գիւղերում նորութիւն չէ. դա պատերազմական դրութեան արդիւնք չէ. այդ պատմութիւնը հին է. դա բիւրօկրատիայի տիրապետութեան և գիւղական ժողովրդի բողոքելու, պաշտպանելու անընդունակ լինելու պտուղն է։

Վերջապէս տարան կերան Ղարաբաբայի հասարակութիւնից 1906 թ. 800 րուբլին մէկ, 532 րուբլին էլ մէկ. վերջինս որպէս նոյն հասարակութեան դատարանի մօտ շինված խոհանոցի ծախք, որի շէնքին 50 րուբլուց աւելի ծախք չէր կարող գնալ, քանի որ քարը և տեղը հասարակութիւնից էր և շէնքը մի փոքրիկ սենեակ է։

Կը տանեն և կուտեն 1907 թւից և այն յիշեալ 1120 րուբլին մէկ, 500 րուբլին մէկ։

Ղարաբաբայի հասարակութեան գիւղերից տարեկան միջին թւով մօտ 1500 րուբլի աւելորդ փող է հաւաքվում, որը վայելում է հաշտարար միջնորդը իր ստորին և վերին ծառայողների հետ միասին։

1500 րուբլին մի գումար է, որով կարելի է այս շրջանում մէկ երկդասեան դպրոց պահել, կամ մէկ հմուտ փելդշէր հրաւիրել և կանոնաւոր դեղատուն պահել և կամ ժողովրդի այլ կսկծոտ ցաւերին դարման անել. չէ որ գիւղական ժողովուրդը ցաւոտ է ու դարդոտ է, որոնք օր աւուր աւելի ու աւելի խորանում են բիւրօկրատ կառավարութեան բիւրօկրատիկ ճուտիկ-պաշտօնեաների հարուածներից։

Վայ, բիւրօկրատիա, տեսնենք վերջդ ինչ կը լինի։

Ղարաեան

ՕՐՎԱՑ ԽՆԴԻՐՆԵՐ

X

«Միջադէպը սպառված է», հաղորդում են լրագրական վերջին տեղեկութիւնները։

Երկու հակառակ ախոյեաններ—բիւրօկրատական ռէժիմը և ժողովրդական ներկայացուցչութիւնը սպառնական ցոյցերով իրար դէմ դուրս եկան. մէկը ընտրել էր իր համար «ոչ մի զինւոր չենք տայ» լօզունգը, իսկ միւսը «Դուման կը ցրեմ»։

Բայց երկու ախոյեաններն էլ դեռ չը զարնըված իրար, յետ նահանջեցին, ընդհարումը յետաձգելով մի այլ աւելի պատեհ րօպէի։ Եւ միջադէպը այժմ սպառված է...

Սպառված է սակայն օպպօզիցիայի ակնբախ պարտութեամբ... Այդ հանգամանքը պէտք է հաշուի առնի օպպօզիցիայի այն մասը, որ պատճառ եղաւ մի այդպիսի անփառունակ պարտութեան, որի բարոյական արժէքն անգամ չէ կարող շօշափելի լինել ժողովրդի համար։

Արդ, ինչ ոյժերի վրա են նրանք յոյս դնում, երբ դեռ տրտնջում ու բողոքում են Գօլովինի վարմունքի դէմ, որ ամեն ջանք գործ դրեց սխալը ուղղելու ու Դումայի արձակման առաջն առնելու համար։

Միթէ ազատագրական շարժման համար մաքառող օպպօզիցիայի վարկը կը բարձրանար միայն այն դէպքում, եթէ այդպիսի ղըլնիվակ նիստում ստեղծված մի չնչին դէպքի պատճառով Դուման արձակվելու լինէր, այլ ոչ մի ուրիշ խոշոր ու ժողովրդի համար յարգելի դէպքի պատճառով։

Եւ կարծում էք ժողովուրդը շնորհակալութիւն կը յայտնէ՞ր դրա համար օպպօզիցիային. այն օպպօզիցիային, որին տուել է «Դուման պահպանելու» նշանաբանը։

XI

Միջադէպը սպառված է,—յայտարարեցին կառավարութեան ներկայացուցիչները։ Զօրքի ներկայացուցիչը ընդունում է միջադէպը սպառված, իսկ պրեմիէր-մինիստրը համարում է Դուման այն միակ գործօնը, որ ընդունակ է Ռուսաստանը դուրս հանել և կանգնեցնել խաղաղ զարգացման ճանապարհի վրա։

Բայց անկեղծ ե՞ն այդ խօսքերը։ Հեգնութիւն չէ՞ այդ բոլորը։

Ի՞նչ երաշխաւորութիւն, որ հին ռեժիմի սյուներից կազմված «աստղաւոր պալատը», ու բարձր շրջանները չեն ստեղծի նոր միջադէպեր, չեն սպառնայ Դումայի գոյութեանը, չեն ուրանայ ժողովրդական ներկայացուցչութեան «միակ գործօն» լինելը։ Եւ մի այնպիսի բարձր հաստատութիւն, ինչպիսին է Դուման, որ կոչված է ժողովրդի բաղդը ապահովելու օրէնսդրական ճանապարհով, կարելի՞ է զանազան բիւրօկրատների քմահաճոյքի ու տրամադրութիւնների խաղալիք դարձնել, կապել պատահական միջադէպերի հետ, որպիսիները կարող են պատահել ամեն քայլափոխում և որոնք անխուսափելի են հին ու նոր ռեժիմի մէջ շարունակվող կռւի ժամանակ։

Կառավարութիւնը, եթէ արդարև համարում է Դուման այն միակ գործօնը, որ ընդունակ է կանգնեցնելու երկիրը խաղաղ զարգացման ճանապարհի վրա, պարտաւոր է ազատել նրան այդպիսի կապանքներից և Դուրնովոյի ու իր համախոհ ինտրիգանների սպառնացող ուրուականից... Նա պարտաւոր է պարզ ու բացորոշ կերպով ցոյց տալ իր վերաբերմունքը դէպի ժողովրդական ներկայացուցչութիւնը։ Եւ ինչպէս «Рус. Вѣд.»-ն է նկատում է, դրա համար «անխուսափելի է մի փոքր թեքվել դէպի աջ կամ դէպի ձախ։ Գնալ դէպի աջ՝ նշանակում է ռուս ժողովրդի միութեան յեղափոխական ձգտումներին բաւարարութիւն տալ, Դուման արձակելու միջոցով պետական յեղաշրջում առաջ բերել։ Իսկ դէպի ձախ գնալ՝ նշանակում է ընդունել հասարակական միահամուռ ցանկութիւնների արդարացի լինելը»։ Թւում է որ կառավարութիւնը վերջին օրերս տրամադրութիւն է ցոյց տալիս դէպի ձախ թեքվելու։ Դրան իբրև ապացոյց կարող է ծառայել հէնց այն փաստը, որ վերջապէս սև-հարիւրակային կազմակերպութիւնների դէմ բռնաբարումներ են ձեռք առնվում։

Եթէ այդ երևոյթը մի ժամանակաւոր մանեօվր չէ միայն, եթէ նա իսկապէս կառավարութեան անկեղծ որոշման արդիւնքն է, ապա պէտք է սպասել, որ այլևս չեն կրկնվի այնպիսի միջադէպեր, ինչպիսին ծագեց զինւորակոչութեան հարցի առիթով և սպառնաց հին ու նոր ռեժիմի պատահական ընդհարման մէջ խեղդել ժողովրդական ներկայացուցչութիւնը իր գոյութեան այն շրջանում, երբ գործունէութեան շօշափելի փաստեր դեռ չէր տուել և նոր պիտի տայ։ [illegible] նորերը չեն ստեղծվելու արդեօք։ Հնարաւորութիւն կը տրվի Դումային անվտանգ շարունակելու իր աշխատանքները։

Ահա թէ որտեղից պէտք է երևայ կառավարութեան շիտակ ուղղութիւնը և խօսքերի անկեղծութիւնը։

Լ. Դանիէլեան

ԲԺՇԿԻ ԿԱՐԵՒՈՐՈՒԹԻՒՆԸ ՄԵՐ ԳԻՒՂԵՐՈՒՄ

I

Շնող գիւղ, ապրիլի 18-ին

Մեր գիւղերը բժշկական օգնութիւնից իսպառ զրկված են, բառիս ընդարձակ իմաստով։ Հացի պակասութեան, ընդհանուր սովի և մեր շուրջը տիրող բազմաթիւ ձախորդութիւնների ազդեցութեան տակ մենք մասամբ մոռացութեան ենք տուել, մասամբ էլ աւելորդ կամ վաղաժամ համարել այդ մասին լրջօրէն մտածելը։ Սակայն որքան էլ աշխատենք լուրջ նշանակութիւն չը տալ այդ կարևոր հարցին, այնուամենայնիւ փորձերը մեզ հետ այլ կերպ են խօսում և նրա մասին այլ կերպ մտածել ստիպում։ Գիւղերում, չը խօսելով «ծաղիկ» և նման այլ վարակիչ հիւանդութիւնների մասին, որոնք մտնելով բժշկներից արհամարհված մեր գիւղերը և դիմաւորվելով խնկով ու աղօթքով՝ ահագին թւով զոհեր են տանում, պատահական, բժշկելի հիւանդութիւններ միշտ եղել են, կան և կը լինեն։ Գիւղացիք, քիչ բացառութեամբ, վերջապէս հասկացել են գրաբացփալչների և հաքիմների բժշկութեան կեղծ և փնասակար լինելը, գիտակցաբար են վերաբերվում դէպի արդի գիտնական բժիշկները և աշխատում են իրանց հիւանդներին նրանց ձեռքով բժշկած լինել։

Գիւղերում բժիշկ չը կայ, ուրեմն հիւանդին պէտք է բերել բժշկի մօտ։ Ով ծանօթ է մօտիկից գիւղացու կեանքին և շփումն ունի նրա հետ, նրա համար պարզ և հասկանալի կը լինի այն դժոխային դժուար կացութիւնը, որի հետ կապված է գիւղից քաղաք բերված հիւանդի բժշկութիւնը։ Պարտքով վերցրած ահագին ծախքերի տակ տնքալով նա բերում է հիւանդին Թիֆլիս, դեռ լաւ, եթէ ծանօթ-բարեկամ ունի, որտեղ կարող է իջնել առաջին օրը գոնէ, իսկ ով այդ համեստ բարիքից էլ զրկված է, դիմում է հիւանդանոց, որտեղ ըստ սովորականի, տեղ և ընդունելութիւն չը գտնելով՝ փոր-փոշման յետ է դառնում կամ գիւղ և կամ դիմում Թիֆլիսում, ի նախատինք 100-աւոր բժիշկների, վխտացող ամենագէտ կիթխաւներին...

Ի՞նչ է ուրեմն մնում ասելու, որպէսզի հնար լինի գիւղում հիւանդներին նախնական օգնութիւն հասցնելու, հասարակ հազը թոքախտի և կամ թոքախտը նրա տեղ չընդունելու համար։ Յոյս դնել գիւղական մշտական բժիշկ ունենալու վրա, դա անհուսալի ինքնախաբէութիւն կը լինէր, եթէ աչքի առաջ ունենանք այն հանգամանքը, թէ ինչ դժուարութեամբ մեր բժիշկները համաձայնվում են Թիֆլիսից պոկ գալ, իսկ դրա փաստերը բազմաթիւ են։ Միակ միջոցը, որով այդ դէպքում կարելի է կիսով չափ թեթևացնել մեր գիւղացիների դժուար կացութիւնը, դա, իմ կարծիքով, գիւղական փոքրիկ դեղատուն ունենալն է իր փելդշերով։ Հրաւիրելով բժշկական կարօտութիւն ունեցող մեր հարևան միւս գիւղացիների ուշադրութիւնը, ցանկալի էր լսել կարծիքներ, այս կարևոր հարցը իրական հողի վրա դրված տեսնելու համար։

Բ. Մկրտումեանց

ՈՂԲԵՐԳԱԿԱՆ ԴՐՈՒԹԻՒՆ

—

Պատմում են, որ մի չար և բծախնդիր ամուսին, որը երկրորդ անգամն է ամուսնացած եղել, սովորութիւն է ունեցել ամեն երեկոյ, խանութից տուն վերադառնալուց յետոյ, մի որևէ պատճառ գտնել և իր կնոջը թակել։ Դժբաղդ կինը որչափ աշխատել է ամեն տեսակ զիջումներով ոչ մի առիթ չը տալ նրա բարկութիւնը շարժելու և ծեծի ենթարկվելու, այնուամենայնիւ ամուսինը դարձեալ մի որևէ պատճառ գտել է միշտ կնոջը զանակոծելու համար։ Լաւ հասկանալու համար, թէ որ աստիճանի է հասնելիս եղել այդ ամուսնու բծախնդրութիւնը, հետևեալ դէպքն է պատմվում։

Կինը մի անգամ մտքումը դնում է անպայման բոլոր գործերը այնպէս անել ու կարգադրել, որ ամուսինը այլևս ոչ մի պատճառ չունենայ այդ օրը բարկանալու։ Ամեն ինչ նա պատրաստում է ամուսնու ուզած ձևով և անկողինն էլ նրա ցանկութեան համաձայն տանում է վաղօրօք կտուրն է պատրաստում։ Ամուսինը գալիս է տուն և յիրաւի որ այդ օրը ոչ մի առիթ չէ գտնում բարկանալու։ Կինը ուրախանում է, որ այդ օրը, վերջապէս, խաղաղ անցաւ։ Ընթրիքից յետոյ, երբ անկողին է մտնում հանգստանալու, նա մինչև իսկ բանաստեղծական տրամադրութեան մէջ է ընկնում, պայծառ երկնքին ու պլպլան աստղերին նայելով, ու սկսում է քաղցր զրոյցներ անել կնոջ հետ զանազան համաստեղութիւնների մասին։

—Այս ինչ աստղեր են, կնիկ, հարցնում է ամուսինը։

—Դրանց «գութան աստղ» են ասում, պատասխանում է ուրախացած կինը։

—Իսկ այն իրարու վրա թափված աստղերն ինչ են։

—Դրանք էլ զարման գողացողի ճանապարհն են։

—Իսկ այն հեռւում երևացող շարան աստղերն ինչ են։

—Նրանց էլ շիշ ու շամփուր են ասում, պատասխանում է կինը դարձեալ ուրախացած, որ կարողանում է ամուսնու հետաքրքրութեանը բաւարարութիւն տալ։

—Իսկ այս, ճիշտ մեր անկողնու վերևում գտնվող երեք փայլուն աստղերը ինչ են, նորից հարցնում է հետաքրքիր ամուսինը։

—Դրանց էլ «կշեռք» են ասում, իսկ դրանց մօտ գտնվող մի խումբ աստղերն էլ կշեռքի քարերն են, պատասխանում է ոգևորված կինը։

Սակայն խեղճ կնոջ ոգևորութիւնը մի վայրկեան է միայն տևում, որովհետև քար ու կշեռքի անունը լսելուն պէս ամուսինը տեղից ցատկում է ու յարձակվում կնոջ վրա։

—Ախ դու անիծված,—գոչում է նա կնոջ հարուածելով,—դու դիտմամբ իմ անկողինը քար ու կշեռքի տակն ես գցել, որպէսզի նրանք թափվեն իմ գլխին և սպանեն...

Ասացէք, թէ ճիշտ այդ դժբաղդ ու շարունակ ծեծի սպառնալիքի տակ ապրող կնոջ դրութեան մէջ չէ գտնվում Ռուսաստանի երկրորդ Պետական Դուման։ Ինչպիսի զիջումներ ասես, որ նա չարեց, որպէսզի կարողանայ իր գլխից հեռացնել իրան արձակելու սպառնալիքը, որ դամոկլեան սուրի նման հէնց իր գումարման առաջին օրից, հին ռէժիմի սիրահար միապետական բիւրօկրատիան և այդ ռէժիմի ճահճի մէջ իրանց շատ լաւ զգացող Պուրիշկեվիչեան տարրերը միշտ նոր ու նոր առիթներ են գտնում Դուման կեանքից զրկելու սպառնալիքի տակ պահելու։

Եւ շնորհիւ այդ հանգամանքի ինչ է այսօր մնացել այն «ձախակողմեան», խռոխ ու ըմբոստ Դումայից։ Արձակված լինելու սարսափի ազդեցութեան տակ Դուման հրաժարվեց իր ամենաէական ու կարևոր պահանջներից. նա հրաժարվեց ամնիստիայի պահանջից, հրաժարվեց պատասխանատու մինիստրութիւն ուզելուց, հրաժարվեց տասնեակ կարևոր հարցապնդումներից, հրաժարվեց մինիստրական դեկլարացիան քննադատելուց, և այլն, և այլն։ Սակայն ինչ ստացաւ Դուման իր այդ բոլոր զիջումների փոխարէն կառավարութիւնից։ Ոչինչ, բացի շարունակական «ձեզ կարձակենք» սպառնալիքից։

Գօլովինի Ցարսկօէ Սելօյում ունեցած տեսակցութիւնից յետոյ մի րօպէ կարծվում էր, թէ Դուման ցրելու սպառնալիքը այլևս բոլորովին վերացած է. թւում էր, թէ այլևս Դումայի ու կառավարութեան համերաշխ գործակցութեան ճանապարհը բոլորովին հարթված է և Դուման այլևս աւելի հաստատ քայլերով կընթանայ իր աշխատանքների մէջ ու չի մտածի իրան արձակելու մասին։ Բայց Դումայի այդ խաղաղութիւնն ու անդորրութիւնը [illegible] առակի դժբաղդ կնոջ նման չափազանց կարճ տևեց, անբարեխիղճ ու կռւարար ամուսին—բիւրօկրատիան վերջ ի վերջոյ դարձեալ առիթ գտաւ ամեն բանի մէջ զիջող Դումայի գլխին բռունցք բարձրացնելու։ Եւ յիրաւի պատգամաւոր Զօհրաբեանի ճառը արդեօք հէնց նոյն «քար ու կշեռք» համաստեղութեան դերը չը՞ կատարեց։ Դժբաղդաբար ամսիս 16—17-ի Դումայի նիստերը, երբ Զօհրաբեանի ինցիդենտը տեղի ունեցաւ, դռնփակ էին և աններելի եղաւ մամուլին այս նիստերի ստենոգրաֆիկ արձանագրութիւնը հրատարակելու, որպէսզի այդպիսով ամեն մարդ հնարաւորութիւն ունենար անձամբ դատելու, թէ ո՞ր աստիճան վիրաւորական խօսքեր է պարունակել իր մէջ Զօհրաբեանի ճառը։ Բայց և այնպէս անկարելի է ենթադրել, թէ Զօհրաբեանը, որ անշուշտ խօսել է Դումայի սօց.-դեմօկրատական ամբողջ փրակցիայի կողմից, այնպիսի բան ասած լինի Ռուսաստանի զօրքի մասին, որ հազար անգամ ասված ու կրկնված չը լինի ոչ միայն սօց.-դեմօկրատների, այլ և նրանցից շատ աւելի աջակողմեան կուսակցութիւնների կողմից թէ մամուլի մէջ, թէ առաջին Պետական Դումայում և թէ այլ հրապարակական ժողովներում։

Միթէ առաջին անգամն է բիւրօկրատիան այս կարծիքը լսում։ Միթէ հէնց այդ բիւրօկրատիայի միս ու արիւնը կտոր՝ նախկին զինուորական մինիստր և Մանջուրիայի ամբողջ բանակի հրամանատար գեներալ Կուրօպատկինը ճիշտ մի տարի առաջ մօտաւորապէս նոյն կարծիքը չը յայտնեց, որ և արտագրվեց այսօրվան հարայ-հրոց բարձրացնող «Нов. Вр.» թերթի էջերում։ Միթէ մօտաւորապէս նոյն բանը շատ անգամներ չէ՞ կրկնել հէնց ինքը Մենշիկօվը։ Այն որ Զօհրաբեանի ճառի մէջ ոչ մի նոր ու արտաքոյ կարգի բան չէ եղել, պարզ է հէնց նրանից, որ, առաջին անգամ, երբ Զօհրաբեանի ճառի առիթով աջակողմեանները սկսել են աղմկել, Գօլովինը հանգստացրել է նրանց, յայտարարելով իր կողմից, որ ինքը Զօհրաբեանի ճառի մէջ ոչ մի վիրաւորական բան չէ նկատում զօրքի հասցէին։ Այդ շատ պարզ է և այն հանգամանքից, որ, երբ դարձեալ Դուման ցրելու սպառնալիքի ազդեցութեան տակ առաջարկութիւն է եղել Զօհրաբեանին խօսքի իրաւունքից զրկելու, սօց.-դեմօկրատների հետ միասին, իբրև բողոք, Դումայից դուրս են եկել օպպօզիցիայի կէսից աւելին։

Հին ռէժիմի կողմնակիցները պարզապէս անկարող են տանել Դումայի ներկայութիւնը։ Սիրտ առած նամանաւանդ այն հանգամանքից, որ ներկայումս սովի ու տառապանքների մատնված ժողովուրդը այլ ևս հանդարտվել է, ոյժ չէ մնացել նրա մէջ ազատագրական պայքարը շարունակելու, նրանք կամենում են օր առաջ ցրել Դուման և միանգամից ընդ միշտ մնաս բարև ասել Ռուսաստանի «սահմանադրութեանը»։ Եւ հէնց դրա համար էլ աջակողմեան կամարիլլան միշտ չեղած տեղից էլ առիթներ է փնտռում «շրջանիներին» coup d'Etat-ի դրդելու համար։ Վայ նրանց միայն, որոնք չեն հասկանում կամարիլլայի այդ գիւային խաղերը և, ենթարկվելով նրանց պրօվօկատորական ազդումներին, նոյնպէս իրանց շահերը ուղղում են դէպի սպառնալիքների չենթարկվող պատգամաւորները։

Խնդրի ամենացաւալի կողմն այն է, որ Դումայի մեծամասնութիւնը, իր անօգնական դրութիւնից դրդված ու հին ռէժիմին վերադառնալու վախից սարսափած, ամեն օր ստիպվում է նոր ու նոր զիջումներ անել, առանց համարձակվելու սակայն կառավարութիւնից մի որևէ փոխադարձ զիջում պահանջելու։

Շատ բնական է, որ ստեղծված այդ անհնարին դրութիւնից վերջ ի վերջոյ օգտվում է միմիայն Ստօլիպինի կառավարութիւնը, որի տեսակէտով Ռուսաստանի սահմանադրութիւնն ու Պետական Դուման գոյութիւն ունեն ոչ թէ Ռուսաստանի ժողովրդի համար, այլ միմիայն արտասահմանեան բանկիրների ու քաղաքական մարդկանց աչքերին թող փչելու համար։ Եւ հէնց այդ պատճառով էլ հետատես Ստօլիպինը այնպիսի դրութիւն է ստեղծել, որ Դուման ձևականօրէն գոյութիւն ունի, իսկ իսկապէս նա գոյութիւն չունի։ Նա շատ լաւ հասկանում է, որ Դուման ցրելը բոլորովին ձեռնտու չէ կառավարութեան համար, գոնէ մինչև նոր փոխառութիւն աջողելը։ Այլ բան է, ի հարկէ, եթէ Դուման առաջինի նման ըմբոստ բնաւորութիւն ունենար և պահանջկոտ լինէր։ Բայց նա տեսնում է, թէ ինչպէս Դուման հէնց իր գումարման առաջին օրից, զգալով իր անօգնական ու ամուր յենարանից զուրկ լինելը, չափազանց զիջող բնաւորութիւն ունի և յօժար է Ստօլիպին-Կօկօվցեվի հետ էլ եօլա գնալ, միայն թէ իրան չը ցրեն։ Եւ օգտվելով Դումայի այդ տրամադրութիւնից՝ նա մի կողմից շարունակ Դուման ցրելու սպառնալիքներ է ստեղծում, իսկ միւս կողմից էլ հէնց ինքը միջնորդ է հանդիսանում բարձրագոյն շրջանների առաջ Դուման ցրելու վտանգից ազատելու համար։ Այս եղանակով հանճարեղ պրեմիէրը մի հարուածով ոչ թէ երկու, այլ մինչև իսկ երեք նապաստակ է որսում։ Նախ այդպիսով նա շարունակ խոնարհութեան մէջ է պահում Դուման և նոր ու նոր զիջումներ է որսում, երկրորդ՝ նա իր սահմանադրական ու պարլամենտարիզմի անկեղծ բարեկամ լինելն է ապացուցանում եւրոպացիներին, և երրորդ՝ այն դժբաղդ ու ողբալի դրութիւնն է ստացվում, որ այն ժողովրդային պատգամաւորները, որոնք Դումա էին գնացել ամենից առաջ Ստօլիպինի անպատասխանատու մինիստրութեան դէմ կռւելու և պայքարելու նպատակով, այսօր ստիպված են նոյն Ստօլիպինին ու նրա մինիստրութեանը խորին շնորհակալութիւն յայտնել նրա ազատարար դերի համար, որ նա «բարեհաճեց» միջնորդ հանդիսանալ և թոյլ չը տալ, որ Դուման ցրեն...

Միթէ դրանից էլ աւելի ողբերգական դրութիւն կարող է լինել ժողովրդային ներկայացուցիչների համար։

Այս բոլորից յետոյ բնականօրէն ինքն ըստ ինքեան հարց է առաջ գալիս, թէ արդեօք կարելի՞ է մի որևէ դրական բան սպասել Ստօլիպինի բարեհաճութեամբ պահպանվող Դումայից և կարելի՞ է արդեօք Դուման վերջնականապէս ազատված համարել ցրելու վտանգից, եթէ միայն նա համարձակութիւն ունենայ գէթ մազաչափ հաւատարիմ մնալ իր լօզունգներին։

Խ.-Ազատ

ԻՄ ԽՕՍՔԸ

—

Ճեմարանի մանկավարժական ժողովի 26-րդ նիստում

(Մարտ, 20 երեքշաբթի)

Բարձրապատիւ հ. տեսուչ և յարգելի պաշտօնակից ընկերներ!

Մեր նախընթաց ժողովից արդէն յայտնի է ինձ, որ դուք խիստ վրդոված էք Թիֆլիսի հայ մամուլի ներկայացուցիչների կողմից ստացած դրութեան վերաբերմամբ։ Այսօրվայ ժողովում վերջնականապէս խմբագրելու ենք այն պատասխան-նամակը, որ ուղարկելու է տասներկու խմբագիրներին Մանկ. ժողովի կողմից։ Նախ քան այդ պատասխանը կազմելը, թոյլ տւեք ինձ ասել մի քանի խօսք։

Ինչպէս մեր այստեղ հաւաքւածներիս, այնպէս էլ մեզ դիմող խմբագիրների նպատակն է անշուշտ ճշմարտութեան վերականգնումը ճեմարանի վերջին դէպքերի վերաբերմամբ. այդ մասին ես դժուարանում եմ կասկածել, բայց ճշմարտութիւնը երևան հանելու համար վրդովմունքը, յուզմունքը և կիրքը աւելորդ են, նոյն իսկ վնասակար. ընդհակառակը՝ կարևոր է մոռանալ, կամ վեհանձնաբար անտես առնել անձնական վիրաւորանքները՝ յօգուտ գործի լուսաբանութեան. Հարկաւոր են հրապարակի վրայ եղած փաստերի հերքում և նոր, արդարացուցիչ փաստերի ցուցմունք՝ եթէ կան։ Մամուլի ներկայացուցիչների մեզ ուղղած թղթի վեց մեղադրական կէտերից միայն մէկը, 5-րդը, կարող ենք հերքել, որ ճեմարանի կանոնադրութիւնը թոյլ է տալիս տեսչին, երբ որ ուզենայ, խառն ժողով գումարել. մնացած հինգ կէտերը ծայրէ ի ծայր, սկզբից մինչև վերջը լոկ ճշմարտութիւն են։

«ա. Ո՛ր ճեմարանի երկու ուսանողների արձակման վճիռը կայացել է առանց քննութեան.

բ. Ո՛ր իրենք երկու ուսանողները և աշակերտութեան փոքրամասնութիւնը (ես աւելացնում եմ և չեզօքների խումբը) պահանջել են գործի քննութիւն, բայց Մանկավարժ. ժողովը մերժել է.

գ. Ո՛ր դրա հետևանքը եղել է քսան և մէկ ուսանողների և աշակերտների կամաւոր հեռանալը ճեմարանից և ապա երկու լսարանների փակումը.

դ. Ո՛ր հեռանալուց յետոյ փոքրամասնութիւնը նոյն քննութեան պահանջով դիմել է ճեմարանի հոգաբարձու կաթողիկոսին, բայց դարձեալ մերժում է ստացել.

ե. Ո՛ր այդ նիստերին ժամակցել են շահագրգիռ ուսուցիչներ, մինչդեռ կողմերից միւսի ձայնը բոլորովին ուշադրութեան չի առնվել»։

Այս բոլորն այնքան պարզ են և ամենքիս համար յիշելի, որ այժմ ինքնախաբէութիւն կը լինի մեր այլ կերպ մտածել կամ խօսել։

Մանկավարժական ժողովը, յայտնի է, որ քննութիւն չի կատարել, այլ վարչութեան ժողով բերած մեղադրանքների հիման վրայ է կայացրել իւր վճիռը, թէև պատահել է, որ այդ մեղադրական կէտերից ոմանք, նոյն իսկ հետևեալ օրը, բոլորովին այլ կերպարանք են ընդունել։

Քննութիւն ես հասկանում եմ (ինչպէս և պէտք է հասկանալ) և՛ մեղադրվող կողմի ու վկաների հարցաքննութիւնը, իրերի և պատճառների լուսաբանութիւնը, ստուգելու հրապարակ բերած տեղեկութիւնները։ Այդ մենք չենք արել, մտածելով թէ պէտք է անպայման հաւատ ընծայել վարչութեան, այսինքն տեսչին և վերակացուներին, բոլորովին անտես առնելով թէ իրօք կարող են լինել «շահագրգռւած» անձնաւորութիւններ, և քննութիւնը համարել ենք վիրաւորական վարչութեան համար։ Այո, քննութիւն չի եղել. եղել է միայն աշակերտութեան մի մասի կողմից պահանջ և ժողովի կողմից ցանկութիւն այն ևս բաւական ուշացած։ Եթէ քննութիւն եղել է, ապա ինչ է 13-րդ նիստի արձանագրութեան այն կէտը, թէ այս ինչ պարոնները դէմ էին երկու ուսանողների արձակման վճռին, որոնք պահանջում էին քննութիւն։ Կամ այնուհետև մեր երեք ուսուցիչների (պ. Կանայեան, պ. Յովհաննիսեան և իմ) յայտարարութիւնը հ. տեսչին, որ խնդրում էինք քննութիւն։ Նոյնն էին պահանջում իրենք, արձակւած Աղէկեանը և Փիլոսեանը հ. տեսչից իմ ներկայութեամբ, որոնց հ. Մեսրոպ, պատասխանեց՝ «պարոններ, մեր որոշումը որոշում կը մնայ, դուք արձակւած էք և այլևս աշակերտ չէք, իսկ եթէ քննութիւն էք ուզում, դուրս եկէք և որպէս մասնաւոր մարդ գործ սկսեցէք»։ Այժմ նրանք ուղղակի հ. տեսչի խորհուրդն են կատարում, ճեմարանից դուրս են եկել, և դրսից են քննութիւն պահանջում։ Ճիշտ է, երբ դրութիւնը ճեմարանում խիստ սուր կերպարանք էր ընդունել և մտքերի յուզումը իւր գագաթնակէտին էր հասել աշակերտների մէջ (չեմ քաշւում ասել մեր երերումների շնորհիւ), Մանկավարժ. ժողովը տրամադիր էր (լաւ լսեցէք) տրամադիր էր ասում եմ, քննութիւն նշանակել, մինչև իսկ մտածում էր, թէ ինքը կարող է սխալւած լինել և ժողովը քննութեան դէմ չէ։ Այս բանը, մենք, ժողովի կողմից երեք ընտրւածներս (պ. Աբեղեան, պ. Օլթեցեան և ես) հրապարակապէս յայտնեցինք հակառակ կողմերի աշակերտներին, բայց այդ կողմերից «մեծամասնութեան» ընկերները, ինչպէս մինչև այդ օրը իրենց գրաւոր դիմումներով, այնպէս էլ այդ օրը բանաւոր յայտարարութեամբ պահանջեցին և դրեցին իրենց veto-ն՝ «ոչ մի քննութիւն. Մանկ. ժողովի որոշումը արդար է, նրանք պէտք է հեռանան, այլապէս բարդութիւններ առաջ կը գան»։ Եւ մենք, ժողովի անդամներս, ամաչում եմ ասել, տեղի տւինք, վախեցանք այդ «ճնշող մեծամասնութիւնից». այդ չի հակասում ձեզանից և ոչ մէկը, պարոններ, այդ հաստատում էինք մենք հէնց մեր երեկւայ խօսակցութեան ժամանակ։ Այո, այդ քանը միայն. «քննութեան մենք դէմ չենք, մենք հակառակ չենք, մենք ցանկանում ենք» և որպէսզի մենք մեր վրայից հեռացնենք այդ պատասխանատուութիւնը և մեր ձեռքերը լւանանք, յանձնեցինք այդ գործը ծերունի Կաթողիկոսին, որովհետև նա մեր «բարձր իշխանաւորն է», «ճեմարանի տէրն է»։ Բայց երբ վարչութիւնը, կամ Մանկ. ժողովը տարւայ սկզբից ճեմարանի ծրագրի, առարկաների փոփոխութեան, ներքին կեանքի մէջ մեծ նորութիւններ է մտցրել, այդ ժամանակ մոռացել է «իշխանաւորը» կամ միայն յայտնել է առանց պատասխան սպասելու։ Վերջապէս Մանկ. ժողովը իւր մի որոշումը ինքը նորից քննութեան ենթարկելու համար ինչ կարիք կար Կաթողիկոսին դիմելու. մի՞թէ նա դէմ պիտի լինէր, թէ ինչո՞ւ էք քննում։ Կամ այն է աւելի հետաքրքրական, թէ նա ինչ է պատասխանել մեր դիմումին, ինչո՞ւ է արգելել մեզ քննութիւն կատարել. այդ մասին մենք ժողովի անդամներս, ոչինչ չը գիտենք, և որի պատասխանը պէտք է որ մեզ տայ այսօր հ. տեսուչը, մեր անմիջական իշխանաւորը։ Այժմ մենք միայն հանգիստ կրկնում ենք, թէ մենք ուզեցել ենք քննութիւն և դիմել ենք Կաթողիկոսին, թող նա տնօրինէ ինչպէս կուզէ։ Մեզանից մէկը իրեն այնքան իրաւունք վստահութիւն չի տւել մի օր բարձրանալու վեհարան, իմանալու թէ ինչ դրութեան մէջ է այդ գործերի ընթացքը. կամ ինչո՞ւ է վեհարանը լռութիւն պահպանում։ Հէնց այսպիսի դէպքերում է, որ անհրաժեշտ պահանջ է զգացւում հասարակական ձայնի: Այո, ժողովրդի մասնակցութիւնը այժմ ամեն տեղ կարեւոր է նկատւում, և որի իրաւունքի համար մարտնչելու ենք մենք, և ոչ ընդդիմանալու: Վերցնենք նոյն իսկ կառավարչական դպրոցները, այնտեղ կը տեսնենք Մանկավ. Ժողովում նստած են ծնողները կամ նրանց ներկայացուցիչները ձայնի հաւասար իրաւունքով: Ճեմարանի նման մի առանձնացած հաստատութիւն, որտեղ ոչ հոգաբարձութիւն կայ, ոչ ծնողների ներկայացուցիչներ, աւելի ևս պէտք է, որ մենք գրկաբաց ընդունենք դրսի մասնակցութիւնը մեր խճճւած գործերում, եթէ, իրօք, չենք ուզում մեր դպրոցը նմանեցնել կաթոլիկական վանական դպրոցներին:

Այստեղ չեմ ուզում մասնանիշ անել այն հանգամանքը, թէ որքան արդար էր արձակման վճիռ կայացնել Աղէկեանի և Փիլոսեանի մասին, ես միայն ձեր ուշադրութիւնը հրաւիրում եմ այն երեւոյթի վրայ, որ այդ երկու ուսանողները ինչ ճառերի և գրութիւնների համար որ արձակւել են, դրանից աւելի խիստը, ընդարձակը գրել են թերթերում (և որոնք մինչև այսօր մնացել են առանց հերքւելու վարչութեան կամ մեր կողմից): Եւ թերթերը, ժամուլի ներկայացուցիչները այդ ամենը լսելով հանդերձ, դարձեալ մեզանից քննութիւն են պահանջում. իսկ մենք, մենք դարձեալ, ներէք ինձ ասել, միջոցներ ենք որոնում ազատւելու պատասխանատւութիւնից: Ո՛չ, մենք պատասխանատու ենք, պատասխանատու ենք հասարակութեան առաջ, պատասխանատու ենք հէնց Կաթողիկոսի առաջ և, որ աւելի գլխաւորն է, պատասխանատու ենք մեր խղճի առաջ:

Այժմ ժամուլի ներկայացուցիչները, որոնց ես անպայման համարում եմ ռուսահայ ինտելլիգենտ հասարակութեան, գոնէ մեծամասնութեան, ներկայացուցիչներ, մեզ դիմում են արդէն, որ մենք ինքներս մի կերպ համաձայնութեան գանք գործը քննելու: Մենք ոչ միայն չը պէտք է վիրաւորւենք, այլ պէտք է շատ շնորհակալ լինենք, որ նրանք օգնութեան են հասնում մեզ քննութեան գործը յաջողցնելու համար. (եթէ իրօք մենք կամենում ենք այդ): Եթէ նրանց դիմած հասցէն սխալ է, ինչպէս նկատեց իմ յարգելի պաշտօնակիցներից մէկը, այդ պէտք է մենք ցոյց տանք, կամ մենք ինքներս յանձնենք հասցէատիրոջ:

Առարկեցիք, թէ խմբագիրները պատահական մարդիկ են և հասարակութեան ներկայացուցիչներ չեն. նախ ես կասեմ, որ տասներկու խմբագիրների յետևում կանգնած են անշուշտ և նրանց բոլոր ընթերցողները, ասել է թէ ռուսահայ ընթերցող հասարակութեան «ճնշող մեծամասնութիւնը», երկրորդ մի՞թէ մենք ուսուցիչներս, որ արձակման վճիռը կայացրել ենք, պատահական մարդիկ չենք:

Իմ աւագ պաշտօնակից պ. Լէօ շատ վրդովւած է տասներկու խմբագիրների դիմումից և «ոչ մի գրօշի» արժէք չի տալիս նրանց թղթին. այդ ինձ ամենից աւելի զարմացնում է: Գրագէտ, հրապարակախօս, ինքը երբ կարճ ժամանակ առաջ «Մշակ» լրագրի խմբագիրներից էր, այլ կերպ էր խօսում և հասարակական ամեն մի ցաւի համար բարձրացնում էր իր ազդեցիկ ձայնը և վայ այն մարդուն, որ կը համարձակւէր «ոչ մի գրօշի» արժէք չը տալ նրա խօսքերին:

Առարկում էք, թէ արձակւած աշակերտները և լրագրներից մի քանիսը խիստ կերպով վիրաւորել են մեր ժողովը կամ առանձին անձնաւորութիւնների. այդ ես ընդունում եմ. բայց ո՞վ տեղիք տւեց. ո՞վ ձգեց ձեռնոցը: Մենք, որ մանկավարժական ժողովն ենք կազմում և առանց գործի մանրամասն քննութեան ճանապարհ ենք ցոյց տալիս քանից աւելի ընդունակ, առաջադէմ և աշխատասէր երիտասարդ ույժերի. նրանք ինչպէս պիտի կարողանային պահել իրենց զգայուն և մատաղ սրտի ցասումը. մենք զէնք ունէինք, մեր զէնքը գործ դրինք, արձակեցինք, իսկ նրանց զէնքը մնում էր միայն խօսքը, ազատ խօսքը, թէև երբեմն կրքոտ և վիրաւորական: Մենք ուսուցիչներ ենք, նրանք մեր աշակերտներն են. մենք պէտք է ներենք նրանց վիրաւորանքը և գործին նայենք սառը, անվրդով, անկողմնակալ: Մեզ համար չը պէտք է գոյութիւն ունենան «մեծամասնութիւն» և «փոքրամասնութիւն», այլ միայն աշակերտներ: Ուրեմն ողջունենք Թիֆլիսից մեզ օգնութեան հասնող հայ ժամուլի ներկայացուցիչների միահամուռ և ազդեցիկ ձայնը և յայտնենք մեր խնդակցութիւնը այդպէս եռանդուն դիմումի համար և ինչ կերպ էլ լինի աշխատենք կատարել նրանց առաջարկը կամ պահանջը: Մենք պարտական ենք: Իմ կողմից այսքան:

Գարեգին Լևոնեան

«Ձայն»

ՆՈՒԽՈՒ ԴՊՐՈՑՆԵՐԻ ՄԱՍԻՆ[1])

Անմիջապէս Նուխի հասած աւագ ուսուցչին հոգաբարձութիւնը գրկաբաց ընդունելուց յետոյ, մի պայմանաթղթով յանձնարարում է նրան շտապով վերադառնալ Թիֆլիս և ուսուցչական խումբ կազմել, ի նկատի ունենալով դպրոցի 7 հազար ռուբ. բիւջէն: Աստուածապահ Նուխու համար խոշոր այսպիսի մի գումարի պայմանաթղթի վրա թէ դրամարկղում լինելը հոգաբարձութեան չը հարցնելը, ի հարկէ, պ. Տէր-Աբրահամեանցի առաջին խոհեմ քայլն էր:

Ուսուցչական խմբի կազմելը այսպէս աջող վերջացնելուց յետոյ, հոգաբարձութիւնը ձեռնարկում է դպրոցի նիւթականի (ուսուցիչների ռոճիկների) մասին հոգալ...

Անցեալ տարվայ Եղիշէ վարդապետին վերագրված ու անգին գրքոյկով տարածված[2]) ուսման «պարտադիր և ձրի» սիստեմը միանգամայն մերժւում է, քանի որ իրականութեան շրջանակից դուրս ամեն մի ձեռնարկութիւն հաստատ ուղիղի հետ գործ չունի. այժմ էլ որոշում են ուսումը «վճարովի և ոչ պարտադիր». ամբողջ աշակերտութիւնը բաժանելով 3 դասակարգի՝ հարուստ, միջակ և աղքատ և ըստ այնմ թօշակ 16 րուբլուց ըսկսած. բացի այդ նաև ամենահարուստ ընտանիքներին նալոգ 3 րուբլուց սկսած միանուագ:

Ինչպէս «պարտադիր և ձրի» ուսումը, նոյնպէս և թօշակադրամների վերոյիշեալ սիստեմը մեր դպրոցական կեանքում, կարծեմ, առաջին օրինակը լինելով, հեշտ է երևակայել այն Բաբելոնը, որ առաջ պէտք է բերէր Նուխում նա. ո՞ր մարմինը արդեօք ձեռնհաս և ընդունակ պէտք է լինէր որոշելու ունևորութեան ու չունևորութեան ճիշտ կրիտէրիումը և ո՞վ վերջ պիտի տար ծագած «ինչո՞ւ Մարկոսին 8 ր. են որոշել, իսկ ինձ 10 ր., մի՞թէ նա ինձանից աղքատ է և այլն և այլն» տաղտկալի անհամութիւններին: Իսկ ինչ վերաբերում է նալոգի» ենթարկվածներին, նրանք հէնց իրանց հոգաբարձութեան մասնացոյց էին լինում այդօրինակ նուէրների նախկին բազմաթիւ ցուցակները և մանաւանդ տղայոց դպրոցի շինութեան համար կազմվածը... Ուստի, երբ ուսումնական տարվայ դեռ ևս սկզբի ամիսներում քաղցած ուսուցիչները «հացի փող են խնդրում հոգաբարձուներից, վերջիններս իրանց շալվարի դատարկ գրպանները (որ է և դպրոցի դրամարկղը) ձախ շրջած, վարժապետներին ցոյց տալով ու աղերսելով «բիչ եա սաբռ», դիմում են դարձեալ յաջորդի առաջնորդութեան՝ գտնել դարմանը այս աննախանձելի վիճակի. և նուխեցիների վրա միշտ և հանապազ առատ կրճտացնող Եղիշէ վարդապետը մի կիրակի թափում է հասարակութեան գլխին մի տաշտ կեղտաջուր: Այս պարօրինի բարոյական կշտամբանքի ստացութիւնը ուսուցչական մարմինը, հասարակութեան փոխարէն, չը կարողանալով տանել, պարբերական մամուլի միջոցով ակն ընդ ական պատասխանում է վիճակաւորին («Մշակ» 1906 թ. № 262): Գ. Տէր-Աբրահամեանցի գրչին վերագրված այս յօդւածը նրա երկրորդ անխոհեմ քայլն է կազմում, ի հարկէ. Ի՞նչպէս կարելի էր մերկացնել դպրոցն ու հասարակութիւնը իր ձեռքում խաղալիք դարձրած յաջորդի և հոգաբարուր ռուբլիների խաղատոմսերը իր ձեռ պահած ու դպրոցապատական և Բագուից բերված նոյնպէս հոգաբարուր ռուբլիների հաշիւները հրապարակ չը բերող վարկաբեկ հոգաբարձութեան դիմակը. Յօդւածը պատգրված օրից այս աւագն էլ անցնում է «փուչ»-երի շարքը և սկսվում է յերիւրվել ու հիւսվել դաւեր և այս և այն կողմից, բորբոքվել կրքերը և՛ այս և՛ այն բանակում, անշուշտ չափն ու սահմանը անցնելով թէ հոգաբարձութիւնը, թէ աւագը և թէ ուսուցչական խումբը. իսկ յաջորդարանի փափուկ բազմոցում փռված ընքշաղեմ Եղիշէ վարդապետին մնում մի միայն՝ մեֆիստոֆելեան քրքիջով թնդացնել դահլիճն ու կրկնել «տեսէք, այդ էլ ձեր ժողովրդական լայն իրաւունքները. ես ձեզ չէի ասում, որ հայ դպրոցը կարող է բարգաւաճել միմիայն հայ հոգևորականի ձեռքի ու հովանու տակ»...

Նուխու դպրոցների այս սուղ տեղեկագրին ստիպված եմ կցել որ՝ ոչ մի առաջնորդական կարգադրութիւն, ոչ մի քահանայական քննութիւն, ոչ մի յանձնաժողով և ոչ էլ որևէ նոր որոշումն նորէն մեկին քննութեան ուղարկել Նուխի չի փրկի Նուխու դպրոցները, մինչև որ ժողովուրդը ինքը իր գործերը իր կարող ձեռքը չառնէ: Խե՜ղճ ժողովուրդ, քեզ խաբում են, քեզ գործիք են շինել շահախնդիրները և քո դպրոցների փրկութիւնն ու բարոյական վերածնութիւնը երկու պարտադրի մէջ է՝—ջանացէք աղերսել ազատել ձեզ տէր յաջորդի և ձեր դպրոցները ներկայ վարկաբեկ հոգաբարձութեան խնամակալութիւնից ու հոգաբարձական նոր ընտրութիւն նշանակել տալ անմիջապէս:

Իսկ առայժմ ներկայ հոգաբարձութեան ես կը խնդրէի բացատրել. 1) Ո՞ւմ մօտ են գտնվում վեց հազար րուբլու խաղատոմսերը: Քանի տարի, ո՞վ, ո՞ւմ, որքան շահ է տուել այդ տոմսերի բանկերից հանված ու վաճառականական գործի մէջ դրված, համապատասխան գումարին. 2) Երբ և ինչպէս է գործադրված դպրոցի անձեռնմխելի հինգ հազար րուբլի գումարը. 3) Ինչ իրաւունքով և որտեղ է գործադրված տղայոց դպրոցի շինութեան անունով Բագուից ժողոված 1200 րուբլին. 4) որտեղ է այժմ տղայոց դպրոցի կիսատ մնացած շինութեան համար կազմված (Սահակ վ. Բաղդասարեանցի օրով) նուիրատւութիւնների ցուցակի իսկականը. 5) Երբ էք բարեհաճելու դուք դպրոցական երկամեայ և նախանցեալ տարի Արէշի արկածեալների օգտին հանգանակած դրամի ու իրերի լիակատար հաշիւները ներկայացնելու:

Եթէ այս հարցին հոգաբարձութեան կողմից կարևոր չը համարվի պատասխանել, հետաքրքիր ընթերցողներին կը գոհացնենք մեր պատասխանով:

Իքս

ՆԱՄԱԿ ՆՈՐ-ԲԱՅԱԶԷՏԻՑ

Անցեալ մարտի 22-ին քաղաքային դումայի դահլիճում կայացաւ մէջլշանների տարեկան ընդհանուր ժողովը՝ այս տարվայ նախահաշիւը կազմելու, կամ ճիշտն ասած՝ արքունի հարկերը և հասարակական ծախքերը բաժանելու համար: Չը նայելով, որ քաղ. աւագ պ. Ստ. Բատիկեան թղթով հրաւիրել էր 2—3 օր առաջ և մունետիկը նոյնիսկ ժողովի օրը բազարում «կանչէց» թէ այսօր կանոնօրում հասարակութեան սխօդ է՝ եկէք լսելու, սակայն մեր քաղաքի ժողովուրդը չէր բարեհաճում ոտք դնել ժողովում, մինչդեռ նա գիտէ քունջ ու պուճախում խօսել-բամբասել թէ այս ինչ բանը լաւ չեն որոշել, այն ինչը ծուռն են վճռել և այլն: Եւ պէտք է ասել, որ ամեն մի ժողով կայացնելիս, երբ հասարակութեան մեծամասնութիւն չէ լինում, օրէնքով 30 հոգուց բաղկացած ժողովը կանոնաւոր է համարվում և այդ դէպքում այդ մի բուռը մարդիկ վճռում են քաղաքի ամբողջ հասարակութեան անունից: Եւ հէնց այդ է բուն պատճառը, որ ժողովրդի մեծամասնութիւնը դժգոհ է լինում մէջլշանական այս և այն ժողովի որոշումների վերաբերմամբ և յետոյ տրտունջ ու բողոք արտայայտում: Բայց ո՞վ է մեղաւոր. չէ՞ որ ժամանակին յայտարարվում է կայացվելիք ժողովի մասին և երբ չեն գալիս ժողովի՝ ո՞վ է մեղաւոր: Եւ ահա յիշեալ ժողովը, զոռով խաթրով հրաւիրելով, մարդ ուղարկելով ժողովականներ կանչելու, հազիւ մօտ 100 հոգի, չը նայած, որ քաղաքը ունի մօտ 1,500 ձայն մէջլշանական հասարակութիւն:

Ժողովի առաջ հարց էր դրված՝ հողային արքունի հարկերը և հաս. ծախքերը բաժանել հողի վրա թէ հալի (по состоянію): Ոմանք բղաւում էին՝ «հալի վրա գցէք», ոմանք՝ «հողի վրա բաժնէք»: Սակայն ընդհանուր ժխորից յետոյ ձայնաւոր պ. Ս. Տէր-Գրիգորեանցի առաջարկութեամբ որոշվեց՝ որ այն ծախսերը, որոնք կապ ունեն հողի հետ՝ բաժանել հողահասոյթների վրայ, իսկ այն ծախսերը, որոնք ոչ մի առնչութիւն չունեն հողային հարցերի հետ՝ բաժանել հալի վրա, այսինքն ըստ կարողութեան: Ահա այն ծախսերը, որ վերաբերում են հողային հարցերին և որոնք բաժանվելու են հողի վրա:—1) Արքունական հողային տուրք 7416 ր. 52 կոպ., 2) Ջրուղաշչիների վարձ—240 ր., 3) Միրաբի և Ջուհարի՝ 114 ր., 4) Հորկահաների՝ 200 ր., 5) Հողաչափի՝ 329 ր. 70 կոպ., 6) Ծառայի՝ 100 ր. և 7) Անհրաժեշտ ծախսեր՝ 100 ր.—գումարը 8500 ր. 22 կ.: Ահա գալիս են միւս ծախսերը, որոնք բաժանվելու են կարողութեան չափով՝ տնատէրերի վրա:—1) Ռուսաց ուսումնարանին նպաստ 1230 ր. 2) Աղջի հիւանդանոցին 300 ր. 3) Գրադարանի տան քրէհ 75 ր. բոլոր 1605 ր.: Բացի դրանից կար նաև մի 1000 րուբլու հարց, որ վերաբերում էր հայոց ուսումնարանի օժանդակութեան (որի մասին գրել եմ «Մշակի» № 268-ում): Այդ գումարը նահանգապետը՝ յարգելով քաղաքացիների միջնորդութիւնը հրամայել էր բաժանել նոյնիսկ ծառայողների վրա էլ, այն է եկւոր չինովնիկներին, որոնք ապրում են մեր քաղաքում՝ զանազան պաշտօններով (ինարկէ հայ լուսաւորչական):

Յետոյ՝ կար նաև մի աւելի հետաքրքիր հարց, այն է քաղաքի հանդերի ճանապարհները, որտեղից սայլերը կրում են խոտը և [illegible] և որոնք ամեն տարի հեղեղներից քանդվում—փչանում են, շինել փողով թէ օրամով (տան մշակներով): Տարբեր ձայների և աղմուկների ազդեցութեան տակ՝ ժողովը այդ մասին չը կարողանալով գալ ոչ մի որոշ եզրակացութեան՝ թողեց այդ հարցը որոշելու առանձին մասնաժողովին, որ այդ րոպէին ընտրվեց 10 հոգուց բաղկացած նոյն այդ ժողովում:

Մասնաժողովի անդամներ ընտրվեցին.—1) Ս. Տէր-Գրիգորեանց, 2) Գ. Տէր-Սահակեանց, 3) Կ. Պետրոսեանց, 4) Գ. Սինանեանց, 5) Կ. Ալեսանեանց, 6) Ա. Սարինգիւլեանց. 7) Գ. Դարաղեանց, 8) Ա. Տէր-Մարտիրոսեանց, 9) Ս. Առօյեանց և 10) Ս. Տիրացու-Գրիգորեանց, որոնք ժողովի որոշման համաձայն՝ բաժանեցին հարկերը իւրաքանչիւր մասը իր կարգին: Բայց թէ ինչ ձև ստացաւ այդ որոշումը կամ թէ մեր քաղաքացիներից ո՛ր մասը գոհ է, ո՛րը՝ դժգոհ,—այդ մասին գրելու եմ մի այլ անգամ:

Գ. Սինանեան

ՊԵՏՔ Է ՄԱՔՐԵԼ

Բարսում գիւղ, ապրիլի 15-ին

Կառավարութեան կարգադրութեամբ 1896 թւին փակվեցին հայոց ծխական դպրոցները, այնպէս որ այդ վերջին հարուածն է լինում ուսումնարանների փակման վերաբերմամբ, որից յետոյ հայ ժողովուրդը համարեա իսպառ զրկվեց հայկական տիպի դպրոցներ պահպանելու իրաւունքից:

Կառավարութիւնը, վարակված շովինիստ-ազգայնական մոլութեամբ, ոգևորվելով Կովկասի ռուսացման գաղափարի ցնորամիտ հեռանկարով, մանաւանդ թևեր առնելով այն ակնյայտ ու անսպասելի իրողութիւնից, որ դպրոցների անիրաւացի փակման ժամանակ ոչ մի բողոք, ոչ մի ընդդիմադրութիւն չեղաւ հայերիս կողմից, սկսեց մի արտաքոյ կարգի ուրախութեամբ ռուսական տիպի ուսումնարանների բացումը հայկական գիւղերում: Այսպէս անուանված, շարժական դպրոցները, որոնց գոյութիւնը անհրաժեշտ է դառնում նման պարագաներում, բոլորովին անծանօթ էին հայ գիւղացուն. ես առաւել, որ հայ գիւղացին իր երեխայական հասկացողութեան չափ անզգաստանալութեամբ մի խոշոր չարիք կարող էր լինել նախաձեռնողների համար: Եւ ահա շինականը յանուն իր մատաղ սերունդի կրթական գործի կամայ ակամայ գիւղական համախօսականը ձեռքին՝ վազում է ռուս չինովնիկի շեմքը մաշելու, որը կարծես փորձելու համար մի քանի դժուարութիւններ առաջ բերելով ու մի շարք օրինական ձևականութիւններ կատարելուց՝ թոյլատրում է բանալու մէկը միւսի յետևից ուսումնարաններ, որոնք երկու տեսակ էին. զեմսկի և մինիստրական: Զեմսկի ուսումնարանները, որ շատ սակաւաթիւ են, աւելի վաղուց են բացված, իսկ մինիստրականը գլխաւորապէս վերջին ժամանակներս: Առաջին տիպի ուսումնարանների համար գիւղացին ոչ մի կոպէկ չէ վճարում, այլ ամեն մի կարիք հոգացվում է նոյն նպատակների համար զեմստվօյի կողմից բաց թողնված նպաստներով. իսկ մինիստրական ուսումնարանի համար գիւղացիք համախօսականով պարտաւորվում են վճարելու տարեկան առնուազը 400 ր., սենեակ, վառելանիւթեր, ուսուցչական կահ կարասիք և այլն:

Հասկանալի է, որ ուսուցիչ նշանակելու իրաւունքը վերապահված էր ամբողջապէս ժողովրդական ուսումնարանների վերատեսչին: Ուսուցիչները պէտք է կրթական ցենզ ունենային, բացառութեամբ արհեստաւորաց դպրոցաւարտների, որոնք մի տեսակ մենաշնորհ էին վայելում և որ միանգամայն անհասկանալի էր թէ իրանց ինչ արժանաւորութեան համար էր այդ տեսակ արտօնութիւնն ու նախապատւութիւնը տրվում: Այսպիսով ուսուցիչներ գլխաւորապէս նշանակվում էին արհեստաւորաց դպրոցից, որոնք դեռ մեծ կարօտութիւն ունէին սովորելու. և ահա անծանօթ բոլորովին տարրական մանկավարժութեան ու հասկացողութեան, նոյն իսկ զուրկ հասարակ վարժ կարդալու ընդունակութիւնից, յաւակնութիւն են ունենում լուսաւորութեան միսիոնարով մտնելու ժողովրդի մէջ և իրանց թեր ու տհաս գաղափարներով ուսման լոյս ու պատիւն աւելի ոտնատակ տալիս: Ուսուցիչները օգտվելով ժողովրդական ուսման. վերատեսչի թուլութիւնից, որը իր զառամալական անտարբերութեամբ գարնան ծաղկի նման էր երբեմն լոյս ընկնում գիւղերում կամ նոյն իսկ ոչ մի անգամ այցելութեան չէ գնացել մինչև օրս, ահա աւելի ու աւելի են ծուլանում իրանց լոկ անուանական պաշտօնի մէջ: Պատահել է, որ ուսուցիչը օրերով, շաբաթներով, նոյն իսկ ամիսներով այս ու այն կողմ թափառելով ուսումնարանի երես չէր տեսնում. բայց ամսի 20-ին ռոճիկ ստանալու օրը պատրաստ կանգնած էր ուր հարկն էր: Պատահել է մեզ ներկայ գտնվելու թէ ինչպիսի անփոյթ ոգով ու հարկից սահմանված են համարեա պարապում. և որ զարմանալին է 10—20 րոպէ համբերութիւն չեն ունենում դասատան մէջ մնալու: Այս անպատասխանատւութեան արդասիքն է, որ այսօր մեր գիւղացին մի առանձին սառնասրտութիւն ու ատելութիւն է զգում դէպի յիշեալ տիպի ուսուցիչները:

Այսպիսով մենք տեսնում ենք, որ մի որոշ ժամանակաշրջանի ղեկավարն ու [illegible] մեր իրականութեան մէջ հանդիսանում են ռուսաց տիպի ուսումնարաններն ու նրանց առաջնորդները: Եւ մտածում էք նրանց տուած արդիւնքի մասին, ապա եզրակացնում, որ երևի հէնց գիւղացիների աչքերին թող փչելու համար ու մեր ոչնչութեան մէջ մի երկրորդ ոչնչութիւն յիշատակելու նպատակով այնքան փողերն ու ակնկալութիւնները կորան գնացին...: Պէտք է հեռու մնալ այն մտքից, որ ուսումնարանը բարեգործութեան տեղ չէ. չը պէտք է սովորեցնել ծրիակերութիւն, որով այլասերման վէհ ենք բացում նորից ու հինի մէջ:

Մօտ ժամանակներս ընկերներիցս մէկի հետ խօսակցութեան ժամանակ, որը եղել է նման դպրոցներում ուսուցիչ (այժմ հեռացած), յայտնեց ու պնդեց, որ յիշեալ տիպի ուսուցիչների դէմ պէտք է ուղղակի գաղափարական կռիւ մղել, ասպարէզը մաքրել ծոյլ—անընդունակներից, ապա նրանց տեղ պատւաստել արժանաւորներին: Եւ իսկապէս մինչև երբ այսպէս շարունակել: Պէտք է ասպարէզը մաքրել:

Յ. Երիցեան

ՆԱՄԱԿՆԵՐ ԽՄԲԱԳՐՈՒԹԵԱՆ

Մոսկվա, յունվարի 19-ին

Պ. Հ. Ա...ի «Նպաստամատոյցի պատգամաւորութիւնը» (տ. «Մշակ», № № 6 և 8) յօդւածի վերջին կտորը գրեթէ նուիրած է նուաստիս:

Ես բողոքելով բողոքում եմ Թիֆլիսի Կենտրոնական Նպաստամատոյց Յանձնաժողովի նկատմամբ ինձ վերագրածի դէմ: Այդ առիթով ես ասել եմ միայն հետևեալը.

Պ. Հ. Առաքելեանի մեզ ներկայացրած զեկուցումից երևում է, որ Նպաստամատոյց Յանձնաժողովի ցայսօրվայ գործունէութեան մէջ չը կայ և ոչ մի թերութիւն, մինչդեռ ես ամառս Հին-Նախիջևանումն էի և այնտեղ շարունակ լսել եմ բողոքներ: Համաձայն այդ բողոքներին՝ ուղարկված դրամները և իրերը շատ-շատ անդամներ չեն հասել կարօտեալներին: Այդ քանիցս շեշտվել է մամուլի էջերում: Շեշտել է ինքը Թիֆլիսի Կենտր. Նպ. Յանձնաժողովը ևս, որի այդ առիթով կայացած պաշտօնական արձանագրութեան մի կտորը լոյս տեսաւ «Մշակ»-ում (անց. տ. № 269), և, ի միջի այլոց, հէնց այդ կտոր արձանագրութիւնից էլ իմացվում է, որ Հին-Նախիջևանի այն ժամանակվայ յաջորդ Թովմա վարդապետը մինչ այսօր չի ներկայացրել իր հաշիւը: Միաժամանակ աւելացրի, որ այդ հաշիւը ստանալուց յետոյ ևս չի կարելի հանգստանալ, քանի որ՝ այլ բան է մի հեռաւոր վայրից ստանալ հաշիւ թէ «ստացվեց այսքան իր և դրամ—բաժանվեց այսքան իր և դրամ», և այլ բան՝ համոզվել, որ բաժանված իրերն ու դրամները յիրաւի բաժանվել են ում հարկ էր: Կրկնում եմ՝ ես լսել եմ բողոքներ: Իսկ երբ պ. Հ. Առաքելեանն ինքը վկայեց գաղութիս 31-ին դեկտեմբերի ժողովում թէ՝ «Ճիշտ է, Կենտր. Յանձնաժողովի Հին-Նախիջևանի ներկայացուցչութիւնն ունեցել է թերութիւններ և այժմ փոխարինված է նոր արժանահաւատ կազմով»—Նպաստամատոյցի պատգամաւոր պ. Հ. Առաքելեանի այդ վկայութիւնից յետոյ կրկնակի պարզվեց, որ լսածս բողոքներն «անհիմն» չէին:

Ապա գաղութիս ժողովում ասածիս վրա ես այստեղ ունեմ աւելացնելու հետևեալը.

Այս (1906 թ.) ամառս Հին-Նախիջևանում գտնվեցին որոշ քանակութեամբ զանազան իրեր (թոկ, շղթայ, բահ, կտորներ և այլն), որոնք մինչև այդ մնացել էին «պահված» մասնաւոր տեղերում: Դրանց մէջ եղած թոկերի մասին, որքան ինձ յայտնի է, ինչ որ պաշտօնական գրագրութիւն իսկ տեղի է ունեցել...

Ապա:

«Դիտմամբ» թէ՞ պատահմամբ էր, որ պ. Հ. Առաքելեանը «ոչինչ չը յայտնեց ժողովին այդ գեղծումների մասին»—այդ ես չը գիտէի և չը գիտեմ, ուստի և չէի կարող գործ ածել «դիտմամբ» խօսքը: Ապա՝ այլ բան է «յոռի» յայտարարել մի գործունէութիւն, և այլ բան՝ շեշտել դրա այդ գործունէութեան թերութիւնները: Ես շեշտել եմ Նպաստամատոյցի գործունէութեան թերութիւնները, ոչ աւելին:

Սրան կից ես պահանջ դրի, որ մեզանում վերջ տրվի ինքնարոյս յանձնաժողովներին և մասնաժողովներին և սրանց ներկայացուցիչ պատգամաւորութիւններին և մասնախմբերին, այլ, փոխանակ այդ, ժողովրդի ցաւերը դարմանելու միջոցների և ճանապարհների մասին հարցնել-իմանալ իրան ժողովրդի խօսքը, որ կամքը, որ ժողովրդին վերաբերեալ ամեն ինչ սկսվի և տարվի նոյն ժողովրդի յանձնարարութեամբ և հսկողութեամբ, քանի որ այդ է միակ միջոցը՝ վերացնելու ամեն կասկած որ, ժողովրդին պատկանելը յիրաւի անցել է ժողովրդի գրպանը:

Եթէ ո՛վ և իցէ տեսնում է այդ և նմանօրինակ շեշտումներիս՝ իբր «քարի և սուրբ գործ»-ին «շպրտած քարեր»—«խոչընդոտանքներ»—այդպիսիներին ես ոչինչ ունեմ ասելու...

Ապա:

Ես չը գիտեմ ինչ է ուզում ասել պ. Հ. Ա.-ն, երբ գրում է՝ իբր ես «յարձակվեցի զեկուցանող Առաքելեանի վրա»: Ճիշտ է միայն այն, որ խօսքիս ընթացքում ես կտրուկ շեշտով պահանջեցի պ. Հ. Առաքելեանից՝ յիշատակել գաղութիս 31-ին դեկտեմբերի նման ժողովներում իրանց կեանքը նուիրաբերած զինւորներին ևս, եթէ սա հարկ է զգում իր՝ նոյնիսկ կարճ խօսքում յիշատակել ինչ-որ իրաւաբանների և այլ խմբերի մասին: Եւ այդ պահանջն իսկապէս ինչ չէ՝ եթէ նա լսվում է նուիրական զինւորների «եղբայրական գերեզմաններ»-ից, արիւնաշաղախ վէրքերից, ծխացող կրծքերից...

Ապա:

Յիրաւի, պ. Կ. Կուսիկեանը՝ երբ մինչ 31-ին դեկտեմբերի ժողովականներից, և ո՛չ երբ սրանց «թարգմանը»—ինչպէս յանիրաւի աւելցնում է պ. Հ. Ա.-ը urbi et orbi նուաստիս խօսքի առիթով ասելիքում ունէր տրամադրութիւն՝ անցնել թոյլատրելի սահմանը, սակայն ժողովի նախագահ պ. Ս. Մամիկոնեանն իսկոյն հետ զրկեց պ. Կուսիկեանին խօսքից, որով միաժամանակ ես ևս զրկվեցի սրան պատասխանելու իրաւունքից: Ինչ և իցէ: Նախագահ պ. Մամիկոնեանի՝ պ. Կուսիկեանի «չուզված և զգացված խօսքերի դէմ ելնելը,» կարծեմ, բաւական է՝ բնորոշելու պ. Հ. Ա.-ի գրութեան այն կտորները, ուր վերջինս գծում է իբր նուաստիս դէմ արտայայտված «ժողովականների զայրոյթ և զզւանքը», «ընդհանուր զայրոյթը»: Սրան կից ես ընդունում եմ, որ 31-ի դեկտեմբերի գաղութիս ժողովում թերևս կային մի քանիսը, որոնք այս դէպքում իսկ կարող էին ըստ ամենայնի ձուլվել պ. Կուսիկեանի հետ...

Ի վերջոյ, ինձ մնում է աւելացնել, որ չունեմ առիթ հետաքրքրվելու պ. Հ. Ա.-ի՝ նուաստիս այս կամ այն վարմունքից ստացած «ընդհանուր տպաւորութիւն»-ով, նոյնիսկ երբ, շնորհիւ այդօրինակ «տպաւորութեան», գրի են առնում ինչ-որ կենդանաբանական սրախօսութիւններ...

Բժիշկ՝

Սիմէօն Շահ-Նազարեանց

Թիֆլիսի Հայոց Բարեգործական Ընկերութեան Վարչութիւնը Զատկի տօներին չքաւորների համար ստացել է, 1) եղբ. Միրզոյեան նաւթարդիւնաբերական ընկերութիւնից 500 րուբլի, 2) Հանգուցեալ Եզ. Ա. Դաւթեանի ժառանգուհիներ Կատարինէ և Մարիամ Դաւթեաններից 100 րուբլի, 3) Պ. Ն. Պ. Մակաբեանից 10 ր., 4) մի անյայտից, 5 ր., 5) Մարիամ Սակայեանից 3 պասկա, 6) Ս. Վ. Թումանեանից 14 կտոր հնոտի շորեր, 7) տ. Մարիամ Կուսիկեանից 7 կտոր հնոտի շորեր:

Վարչութիւնը պարտք է համարում յայտնել բոլոր նուիրատուներին իր խորին շնորհակալութիւնը.

Նախագահ Վարչութեան Ս. Յարութիւնեան

Քարտուղար՝ Ա. Աթանասեան

ԼԱԶԱՐԵԱՆ ՃԵՄԱՐԱՆԻՑ ԱՐԵՒԵԼԵԱՆ ԼԵԶՈՒԱՑ

Հաշիւ Սարգիս արքեպիսկոպոս Հասան-Ջալալեանցի դրամագլխի 1906 ամի:

Տոկոսաբեր արժեթղթեր.

	Ռուբլի	Առձեռն դրամ
ՄՈՒՏՔ		
Մնում էր առ 1 յունվարի 1906 ամի	100,250 ր.	180 ր. 96 կ.
1906 ամի ընթացքում մտաւ	5,300 ր.	3942 ր. 40 կ.
Ընդամենը	105,550 ր.	4123 ր. 36 կ.
ԾԱԽՍ		
Վճարված է գնված տոկոսաբեր արժեթղթերի՝ 3944 ր. 40կ. և դրամագլխի 1905 ամի հաշիւը տպագրելու 28 ր. 50 կ., ընդամենը		3972 ր. 90 կ.
Առ 1 յունվ. 1907 ամի կայ առձեռն	105,550 ր.	150 ր. 46 կ.

Ծանօթութիւն: Դրամագլուխը գտնվում է Մոսկվայի Նահանգական գանձարանում և աճելու է 1883 ամից 125 ամի ընթացքում ց12 միլլիօն րուբլի գումար, իսկ ապա տնօրինվելու է նուիրողի անունով ուսումնարաններ և ուսման թօշակներ հաստատելու:

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

Այս երեկոյեան ժամը 6-ին Վեհափառ Կաթողիկոսը կը ժամանի Թիֆլիս:

Թիֆլիսի իշխանութիւնները մօտ օրերս մինիստրութիւնից հարցապնդում են ստացել հաղորդել անյապաղ ինչ տեսակ ընկերութիւններ և հաստատութիւններ են զբաղվում Կովկասի սովեալներին օգնութիւն հասցնելով և որոնց կարելի է վստահանալ ու իրաւունք տալ հանգանակութիւն անել և ծախսել ժողոված գումարները:

Աղքատների օգտին ստացանք. 1) Մէջէգիւսասրի «ազգային սնդուկի» վարչութիւնից 80 ր. 2) Կիսլավոդսկից—մի տիկնոջից, որը կամենում է անյայտ մնալ, 100 ր.—3) Նոր-Մարգելանից՝ Օվաննա Միքայէլեանից Զատկի տօներին չքաւորներին բաժանելու համար 5 ր. Բագուից—«Մշակի» № 83 յիշուած կոյր մարդու օգտին 3 ր.—Ա. Ս. Մելիք-Աղամիրեանից:

Թիֆլիսի նահանգապետը Կովկասի Փոխարքային է յանձնել Թիֆլիսի քաղաքային ինքնավարութեան միջնորդագիրը, որով խնդրվում է թոյլատրել հանգանակութիւն սկսել Ռուսաստանի և Կովկասի սովեալների օգտին:

Կովկասի Փոխարքայն ներքին գործերի մինիստրի առաջ միջնորդութիւն է յարուցել 10115 րուբլի յատկացնելու Երևանի նահանգի Շարուր-Դարալագեազի Նորս, Նոր-Բայազէտի գաւառի Սյրեվանիկ, Ախկալա, Ազգիբիր, Բաղկինտ և Քեարիքենդ գիւղի բնակիչներին սերմացու համար:

Ֆինանսների մինիստրը տեղեկացրել է Կովկասի Փոխարքային, որ Թիֆլիսի բնակիչներից մի քանի հոգի դիմել են և խնդրել են թոյլատրել Թիֆլիսում բանալ երկրորդ փոխադարձ վարկի ընկերութիւն:

Ապրիլի 25-ին, Թիֆլիս ժամանեց բժշկապետ Սէմէննիկով իր ընկեր բժիշկների հետ միասին, որոնք գնալու են Գանձակի նահանգը տարափոխիկ հիւանդութիւնների դէմ կռւելու համար:

Թիֆլիսի քաղաքային ձրի ծննդաբերական ապաստարանը 3½ ամսվայ ընթացքում յաճախել են 464 հիւանդներ, որոնցից 228 հոգի ծննդականներ են եղել: Դժբաղդ դէպքեր չեն եղել: Ինչպէս երևում է Հալաբարի ազգաբնակութիւնը հասկացել է այդ հիմնարկութեան օգտակարութիւնը և չէ դիմում այլևս ամեն տեսակ տատերին և հեքիմներին և այլն:

Ադելխանովի գործարանը փակելուց յետոյ հեռացված են՝ թաղքագործութեան բաժանմունքից 45 հոգի, կօշկակարութեան բաժանմունքից 18 հոգի և կաշւի բաժանմունքից 43 հոգի. միևնոյն ժամանակ Ադելխանեանը հրաժարվում է տալ արձակվածներին նրանց պահանջած 3 ամսվայ ռոճիկը, պատճառաբանելով, որ նրա մօտ պահանջված գումարը չը կայ և համաձայնվում է տալ 2 շաբաթվայ ռոճիկ միայն:

Պետերբուրգից վերադարձել է Թիֆլիսում պոլիտեխնիկում բանալու հարցով զբաղվող մասնաժողովի անդամ իշխան Գ. Մ. Թումանովը:

Կովկասի փոխարքան անակնկալ հարցապնդում է արել Բագւի նահանգապետ Վ. Ա. Ալիշևսկուն—թէ որն է յարմար, Բագուն թէ Շամախին, ուր կարելի լինի Բագւի բոլոր նահանգական հաստատութիւնները տեղափոխել:

Բնութեան սիրող ընկերութեան վարչութեան ապրիլի 18 և 25-ին կայացած նիստերում վարչութեան նախագահ ընտրվեց պ. Աւլբէգով, նախագահի օգնական Ի. Ս. Ստանիլևսկի, քարտուղար՝ Կ. Ս. Դերժավին և գանձապահ Ն. Վ. Ելչանինով: Այդ նիստերում որոշվել է սկիզբներում մի շարք էկսկուրսիաներ կազմել քաղաքից դուրս և կազմակերպել հասարակական դասախօսութիւններ: Առաջին էկսկուրսիայի համար ընտրել են Զեբիպաշնի կոչված լիճը, ուր և կայացաւ էկսկուրսիա այս ապրիլի 24-ին կենդանաբան Կ. Ա. Սատունինի և բուսաբան Լ. Կ. Վերեսևի ղեկավարութեամբ: Մօտիկ ապագայում դասախօսութիւն է կատարվելու նոյն լճի մասին բուսաբանական և կենդանաբանական տեսակէտներից, որին կը մասնակցեն պ. Կ. Վերեսևը և Սատունինը: Այդ դասախօսութեան տեղի և ժամանակի մասին կը ծանուցվի լրագիրներում: Ընկերութեան կից մտադրութիւն կայ հիմնել մի թանգարան, ուր կը ժողովվեն էկսկուրսիաների ժամանակ հաւաքած նիւթերը: Ընկերութեան անդամներ գրվողները կարող են դիմել վարչութեան բոլոր անդամներին:

Մօտ օրերս վերջացել է «մահմեդական դաշնակցութեան» կենդրոնական կոմիտէտի համագումարը: Համագումարի արձանագրութիւնները դեռ չեն հրատարակված: Ինչպէս հաղորդում է Պետերբուրգում լոյս տեսնող «Իւլֆէտ» լրագիրը, համագումարը ընտրել է մի մշտական բիւրօ հինգ հոգուց բաղկացած՝ դաշնակցութեան գործերը վարելու և Պետական Դումայում, մահմեդական ֆրակցիայի՝ Դումայից դուրս աշխատանքներին աջակցելու համար: Բիւրօյի անդամներ ընտրվել են. «Каспій» լրագրի նախկին խմբագիր, առաջին Դումայում մահմեդական ֆրակցիայի լիդեր Ա. Մարդան-բէկ Թօպչիբաշէվ, «Իւլֆէտ»-ի խմբագիր Աբդրաշիդ Իբրահիմով, «Казанскій Вѣстникъ»-ի խմբագիր, երկրորդ հաւատարմատար Սէյդ Հիրէյ Ալկին, հրապարակախօս Իւսիֆ Ակչուրին և «Վակթի» խմբագիր Ֆադլէ Քարիմով:

Ապրիլի 25-ին, գիշերվայ ժամը 12-ին Անդրկովկասի երկաթուղիների գլխաւոր արհեստանոցների պահապան Մոլլա-Մահմադ-Ալի-օղլին, մտնելով Թիֆլիս կայարանի III-րդ կարգի դահլիճը, բերդանկայից կրակում է ճանապարհորդուհի Իւան Կալեդայի վրա: Գնդակը դիպչում է ստամոքսին և դուրս գալիս: Վիրաւորվածին հիւանդանոց տարան համարեա անյոյս դրութեան մէջ: Ցանցաւորը ձերբակալվում է: Այն հարցին թէ ինչո՞ւ էր ուզում սպանել, նա պատասխանել է. «գիտեմ թէ ինչու համար. եթէ դա մեռնի, թող նրա մարդը իմ կնոջը առնէ»:

Թիֆլիսի նահանգապետը դիմել է Կովկասի գլխաւոր իշխանութեան և խնդրել է Գօրու գաւառի Շալաուրի, Գաքարանթկարի և Կուլդումա գիւղերի բնակիչներին տալ 1423 ր. 20 ցորէն սերմացու համար:

«Каспій» լրագրում կարդում ենք. «Ապրիլի 20-ին, ցերեկվայ ժամը 2-ին, Բալախնայա փողոցում տեղի ունեցաւ մեծ հրացանաձգութիւն. այդ րոպէին վաճառքի եկած հասարակութիւնը սկսեց այս ու այն կողմ փախչել: Անմիջապէս կրպակները և խանութները սկսեցին փակել: Պարզվեց, որ առաջին գնդակներ արձակել են Աբդուլ-Ազատ-Մահմուդ օղլին, Բուղդանով-Ռասուլ օղլին, Ալի-բալա Կուլի-օղլին և Ալիասկէր-Մանաֆ-օղլին՝ հանդիպած Աբդուլ-Մուխտար օղլու վրա, որը տեղն ու տեղը սպանվում է. Աբդուլի կողմնակիցները, տեսնելով այդ ամբողջը սկսում են կրակել և հետապնդելով փախչող Աբդուլ-Ազատին, Ալէքսանդրեան-Նէվսկի տաճարի մօտ սպանում են նրան: Մնացածները փախչում են: Հրացանաձգութեան ժամանակ ձեռքից վիրաւորվում է նաև Մուսա-Ահմէդ-օղլին: Ոստիկանութիւնը միջոցներ է ձեռք առել ձերբակալելու մեղաւորներին: Հրացանաձգութիւնը տևեց մօտ 10 րոպէ: Պատճառը, կարծում են, որ վրէժխնդրութիւնն է: Նոյն օրը, երեկոյեան ժամը 7-ի մօտերը հրացանաձգութիւն սկսվեց Սադովայա փողոցում: Միքայէլեան այգու մօտ, բագուցիներ Ալի-Աբաս-Զաֆարով Միր-Կազիմ-Բարաևի մի կողմից և Փաշա-Աբդուլ-Բաղի-օղլու, Իսմայիլ-Ալի-օղլու և Աղա-Ալիև-Միրզա օղլու միջև միւս կողմից: Այս հրացանաձգութեան ժամանակ սպանվում է մի ինչ որ ռուս, ըստ երևոյթին նաւաստի, և աջ ոտքից վիրաւորվում է Վլադիմիրսկի նահանգի գիւղացի Գրիգոր Փօրիւշէվ: Նրանք երկուսն էլ դէպքի զոհեր են: Կրակողներից ոչ ոք չէ մնացել: Ոստիկանութիւնը ձերբակալել է Ալի-Աբաս-Ռահիմօվին: Ալի-Աբաս Զաֆարովին և Միր-Կազիմ-Բարաևին, իսկ մնացածներին գտնելու և բռնելու համար ձեռք է առնված կտրուկ միջոցներ: Այս հրացանաձգութեան պատճառն էլ, ինչպէս ասում են, կրկին վրէժառութիւնն է»:

Բագուի IV-րդ քաղաքամասի պրիստաւը հետևեալ իմաստով մի զեկուցագիր է ներկայացրել ոստիկանապետին: Ամսի 22-ին, ժամի 12-ին, հակառակ ոստիկանապետի կարգադրութեան, Նարիմանեան հրապարակում, աճպարար Ֆեօդոր Պավլովիչ Սոկոլովսկին բաց էր արել իր հաստատութիւնը և սկսել էր ձեռնածութիւններ: Պահակ թաղային ոստիկանական վերակացուն՝ Զալաբը, գնալով աճպարարի մօտ, յայտնեց ոստիկանապետի կարգադրութիւնը և պահանջեց, որ փակվի հաստատութիւնը: Նոյն րոպէին խաղը դիտելու եկել էր խապաբօրնի կօզակ գնդի երաժշտական խումբը։ Ջեռնածութիւնները դադարեցնելու պահանջը լսելով՝ կօզակները կայրացած՝ բռնեցին վերակացուին և սկսեցին թակել։ Բացի դրանից՝ նրանք անպատւեցին ծանր խօսքերով ոստիկանութիւնն ու ոստիկանապետին։ Երկու քաղաքապահ ոստիկաններ, ձեռնածու Սօկօլօվսկին և մի քանի հարբած բօսեակներ վերակացու Ջալաբի թակվելը տեսնելով՝ մըտածեցին միջամտել։ Կօզակների և նրանց միջև ծագեց բուռն կռիւ։ Նոյն ժամանակ վրա են հասել նոյնպէս երկու ոստիկաններ և ազատել են Ջալաբին։ Այդ միջադէպից հազիւ մի ժամ էր անցել, երբ բորբոքված կօզակները նոյն փողոցից անցկացող երկու ոստիկանի նշմարելով՝ դիմեցին դէպի նրանց և ցանկանում էին նրանց էլ թակել, բայց ոստիկանները, հանելով իրանց ատրճանակները, արձակեցին յարձակվողներին վախեցնելու համար և այդ կերպով ազատվեցին նրանց ձեռքից։ Կօզակները հետզհետէ աւելի կատաղած, սկսում են ընկնել փողոցներով անցնող անձանց ետևից և բռնելով նրանց ծեծում են։ Կօզակները վիրաւորում են նոյնպէս 10-րդ պահակատեղի ոստիկանին մի քանի տեղերից։ Վիրաւորին փոխադրում են Միքայէլեան հիւանդանոցը։ Յիշեալ ոստիկանը բացի ծեծ ուտելուց, կորցրել է նաև իր ատրճանակը։ Երևի քաշ կօզակներն են թացրել։

---

[1] Մշակ, № 54, 57,

[2] Մինչև անգամ լրագրութեան մէջ («Մշակ» № 38), ինչպէս և այն թէ՝ Եղ. վարդապետը գաւառը դպրոցներով լցրեց, այդ հարցին կը վերադառնանք «կրթական վիճակը Նուխու գաւառում» յօդւածում. առայժմ աւելորդ չի լինի հարցնել յօդւածագրին՝ երբ և ո՞ր գիւղում է բաց արել անձամբ դպրոց կաբինէտային հաճոյքը իրագործած Եղ. վարդապետը: Գուցէ ի նկատի կայ Վարդաշէնի՞ դպրոցը. փառք Աստուծոյ, այդ հօ ամառս էր, երբ (գիւղի յաջորդի իջած տնից 20 քայլի վրա գտնվող) եկեղեցու բացում ժողովուրդը խռնված թէր և դէմ էր խօսում բացվելիք դպրոցի զանազան պարագաների մասին. իր բացակայութեամբ փայլող վարդապետը այդ բոլոր ժամանակ նախկին ընկեր գործարանատիրոջ հետ սառնորակ առուակների ափերին պղպղակ էր վայելում:

—

«Իրշադ»-ում տպված է մի այսպիսի բողոք: «Рус. Слово» լրագրի վերջին համարներից մէկում, Դանչենկօյի կողմից գրված մի յօդուածում, Պետական Դումայի նիստից արտաքսված Շուլկինի՝ Դումայի դահլիճից դուրս գալը Հաղրաթը Մուհամմէդի Մեքքէից Մեդինէ գաղթին նմանեցրված է։ Որովհետև այդ տեսակ նմանութիւնները առհասարակ մահմեդականներին՝ ազատասէրների թշնամի ցոյց տալու ենթադրութիւնն են պարունակում և, բացի դրանից՝ անհատական համոզմունքի վերաբերմամբ յարգանքի պակասութիւն են արտայայտում, մենք սրանով բողոքում ենք Դանչենկօյի՝ Հաղրաթը Մուհամմէդի գաղթը վերյիշեալ նմանութեամբ գործածելու և դրանով մահմեդականների կրօնական զգացումները վիրաւորելու դէմ»։

—

Կանանց իրաւահաւասարութեան լիգան որոշել է միջնորդութիւն յարուցանել, որպէսզի թոյլատրվի լիգայի պատգամաւորուհիներին ներկայ լինելու սինօդում կազմված ժամանաժողովի նիստերին ամուսնալուծական օրէնքը մշակելիս կանանց շահերը պաշտպանելու համար։

—

Գեներալ Ալիխանով-Աւարսկին ստացել է գեներալ-լէյտենանտի պաշտօն։

—

«Закавказье» լրագրի խմբագրութիւնը Պյատիգօրսկից ստացել է հետևեալ հեռագիրը. «Կովկաս կայարանից հաղորդում են, որ այնտեղ Զատկից երեք օր յետոյ մի քանի հազար բանուորներ միտինգ են կազմել։ Վրա հասած կօզակները ցրել են միտինգը. բանուորների մի մասը գրոհ է տալիս դէպի կայարան, գրաւում է շոգեմեքենաները և սկսում է յուսահատական սուլոցներ տալ. շուտով այդտեղից էլ ցրված են կօզակները»։

—

Քութայիսից նոյն լրագրին գրում են. «Բանտը լի է բանտարկեալներով, որոնք ընկած են համարեա իրար վրա։ Երկիւղ կայ, որ այդպիսի ճնշումից վարակիչ հիւանդութիւններ ծագեն»։

—

«Гражданинъ» լրագիրը լսել է, որ իբր թէ Գօլօվինի ունկնդրութեան ժամանակ խիստ նկատողութիւն է արված այն բանի համար, որ կողմնապահ կերպով է վերաբերվում ձախակողմեան ճառախօսներին և ընդհակառակը ճնշում է աջակողմեաններին։

—

«Ռուս ժողովրդի միութեանը» խիստ կերպով հրամայված է «պակասել»։ Պետերբուրգի քաղաքապետը կարգադրել է խուզարկութիւն կատարել սև-հարիւրեակային բոլոր կազմակերպութիւնների մէջ։ («Пет. Лист.»)

—

Մամուլի վերաբերեալ գործերի գլխաւոր վարչութիւնը դիմել է սինօդին՝ առաջարկելով արգելել Իլիօդոր վարդապետին պարապվել հրապարակախօսութեամբ։ («К. М.»)

—

«Пет. Лист.» լրագիրը հաղորդում է, որ Թագաւորը մերժել է Նիժեգօրօդեան «Սպիտակ Դրօշակի» միութեան նախագահ քահանայ Օրլօվսկու միջնորդութիւնը ներումն շնորհել այն 9 կօզակներին, որոնք դատապարտված են բանտարկութեան։

—

«Ռուս ժողովրդի միութեան» թէյատնում, որ գտնվում է Պետերբուրգի Սադօվայա փողոցում, խուզարկութիւն է կատարվել։ Գրաւված են բազմաթիւ սև-հարիւրեակային թըռուցիկներ և տասնից աւելի ատրճանակներ։ Արձանագրութիւն է կազմված։ Յայտարարված է, որ արգելվում է ժողովներ գումարել միութեան թէյատներում։ Առանց թոյլտւութեան այսուհետև այլ ևս արգելվում են «միութիւններին» ժողովներ գումարել։ Իլիօդոր վարդապետը կանչված է եղել Անտօնի միտրօպօլիտի մօտ բացատրութիւններ տալու։

ՈՍՏԻԿԱՆԱԿԱՆ ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆՆԵՐ

—

Ապրիլի լոյս 26-ի գիշերը 8-րդ քաղաքամասի ոստիկանութիւնը ձերբակալել է յայտնի կողոպտիչ Միխայիլ Դավարաշվիլիին, որի մօտ գտել են կացաւոր երկաթ և ելեքտրական լապտեր։ Ձերբակալվածին ուղարկել են կոմենդանտական վարչութիւնը։

—

Ապրիլի 26-ին երեկոյեան ժամը 8-ին Վօկզալնի և Անդրէևսկի փողոցների անկիւնում մի անյայտ անձնաւորութիւն ատրճանակի հարուածով սպանել է երկաթուղու ծառայողների սպառողական ընկերութեան կառավարիչ Նիկօլայ Շրէյդերին։ Դիակը ուղարկված է Միքայէլեան հիւանդանոցը։

—

Ապրիլի 26-ին երեկոյեան ժամը 5-ին սօլդատսկի բազարում Ոսման Գադալի-օղլու գրպանից մի անյայտ գրպանահատ հանել է 106 ռուբլի փող։

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՆԱՄԱԿ ՊԱՐՍԿԱՍՏԱՆԻՑ

—

Թաւրիզ, ապրիլի 19-ին

Հայերիս տնտեսական կացութիւնը օրըստօրէ աւելի անմխիթար և վհատեցուցիչ է դառնում։ Ընթերցողներից գուցէ շատերը չը գիտեն, որ Պարսկաստանում առհասարակ քրիստոնեաները, մասնաւորապէս հայերը, զրկված են որոշ առևտրական արտօնութիւններից շնորհիւ «շիա» վարդապետութեան դաւանանքի, որի հասկացողութեամբ բոլոր օտարադաւանները պիղծ են. հետևաբար որոշ ապրանքներ՝ նամանաւանդ այնպիսիները առաւելապէս, որոնք թացութիւն ունեն, խստիւ արգելված է քրիստոնեայից առնելը և այդ է պատճառը, որ Պարսկաստանում քրիստոնեայ հացավաճառ, նպարավաճառ, մսավաճառ, իւղավաճառ (ամեն տեսակի իւղ և նաֆտ), կաշեվաճառ կամ կաշեգործ երբէք չէք տեսնի։ Հայերը այսպիսի հանգամանքներում ինչ միջոցների պիտի դիմեն իրանց պարէնը հայթայթելու համար. պարզ է, առաւելապէս այն առևտուրը պիտի ընտրէին, որը «Շարիաթը» արգելում է թուրքերին և այդ է պատճառը, որ ոգելից խմիչքների մենավաճառը ամբողջ Պարսկաստանում մնաց հայերի սեփականութիւն։ Շատ անգամներ մենք պատահութիւն ենք ունեցել կարդալու անտեղի մեղադրանքներ պարսկահայ շրջաններին կամ մէյխանաչիների վերաբերմամբ. մենք հաւատացած ենք, որ շատերին յայտնի չեն եղել վերև յիշած հանգամանքները, որոնք ստիպում են ակամայից պարապելու այդ առևտրով։

Բացի խմիչքի առևտրականներից հայերը ունէին մինչև 1901 թիւը որոշ չափով բարեկեցիկ վաճառական դասակարգ, որը պարապում էր մեծ քանակութեամբ չոր մրգեղէն արտահանելով Ռուսաստան, բայց 1901 թւի համաճարակ դարձած առևտրական անաջողութիւնները սնանկացրին համարեա մեր ամբողջ վաճառականութիւնը. և այսօր հրապարակի վրա եղածները մատների վրա կարելի է հաշւել։ Բացի առևտրից հայերը պարապում են Թաւրիզում միայն հետևեալ արհեստներով. դերձակութեամբ, ոսկերչութեամբ և կօշկակարութեամբ,

Հայերի մի որոշ մասն էլ ծառայութեան պաշտօններ ունէին թէ ռուսական, թէ եւրոպական ֆիրմաներում և տէրութեան մաքսատներում ու պօստատներում։ Յիշեալ սահմանափակ միջոցներն էին թաւրիզահայերիս ապրուստ հայթայթողները։

Այդ միջոցներից ամենապատուաւորը մրգեղէնի արտահանութիւնն էր, որը ինչպէս յիշեցի, 1901 թւից դուրս եկաւ հայերի ձեռքից։

«Անջումանի» շնորհիւ պարսիկ խմող դասակարգը ստիպված է թողնել ոգելից ըմպելիքները։ Գինեգործների և օղեվաճառների գնած խաղողը և քիշմիշը շատ անգամ ամբողջը ցրվում է փողոցում, թալանի մատնում և խիստ պատժում այն պարսիկին, որ յանդըգնում է հային խմիչքի համար վերոյիշեալ մթերքները հայթայթել։ Այդ է պատճառը, որ այդ կարգի առևտրականները բոլորովին անգործ են։

Արհեստաւորների մասին արդէն նախորդ մի յօդուածովս յայտնել եմ, որ եւրօպական կօշիկ, կաշեղէնի դէմ բօյկօտ է հրատարակված։

Հետևաբար և արհեստաւորների դրութիւնը շատ աննախանձելի է։

Շատ ու քիչ բարեկեցիկ դրութիւն ունէին պօստի և մաքսի հայ պաշտօնեաները։ Բայց վերջերս սկսած հայահալած քաղաքականութիւնը եկաւ խորտակելու և դրանց նիւթական, տնտեսական կացութիւնը։ Մեծ թւով պաշտօնեաներ դուրս քշվեցին վերոյիշեալ հաստատութիւններից և ի միջի այլոց այնպիսի պաշտօնեաները, որոնք 20—26 տարիներ ծառայել էին այդ հաստատութիւններում և որոնց ուրիշ կառավարութիւններում հանգստեան կենսաթոշակ կը նշանակէին. մեղնում՝ արդարութեան, հաւասարութեան արշալոյսին այսպիսի անարդար պակների մի հիւսուածքով զարդարում են պարսկական Սահմանադրութեան — Մաշրութէի ճակատը. մեր կարծիքով բոլոր հայ պաշտօնեաները միահամուռ բողոք պիտի ներկայացնեն կենտրոնական կառավարութեան ի պաշտպանութիւն իրանց արդար դատի։

Մեծ յոյս ունենք, որ պարսկական «Մէջլիսը» իր գործունէութեան նախօրեակին կը լսէ հայերի արդար բողոքը և չի թողնի բազմաթիւ հայ պաշտօնեաներին անգործ։ Որ հայերս ամեն մի պետութեան պաշտօնատներում բարեխիղճ ծառայողներ ենք եղել, դրա դէմ առարկողներ չեն լինի։ Վերջին հայահալած քաղաքականութիւնը մենք աւելի կողմնակից ենք համարելու Բելժիքայի պաշտօնեաների գործ, որոնք իրանց տեղերը աւելի ամրապնդելու և պարսիկ ժողովրդին սիրաշահելու համար մէկ-մէկ քշեցին հայերին՝ փոխարէնը պարսիկներ ներս առնելով։

Մենք դարձեալ կրկնում ենք, որ հայերը պարտաւոր են իրանց դրութիւնը մանրամասնաբար ներկայացնել կառավարութեան, խնդրելով անյապաղ հոգացողութիւն իրանց անմխիթար կացութեան համար և մենք յայտնում ենք, որ պարսիկ հայրախնամ կառավարութիւնը, որ դարեր շարունակ բարեացակամ վերաբերմունք է ունեցել դէպի իր հայ հպատակները, այս անգամ ևս, ինչպէս ասացինք, արդարադատութեան, հաւասարութեան արշալոյսին անուշադիր չի թողնի նրանց խնդիրը։

Այս կարճ, համառօտ նկարագրութիւնից յետոյ կարծում եմ քիչ հասկանալի դարձաւ մեր դրութիւնը և եթէ յոյսերով չը կերակրվենք, ներկայ մահաշունչ իրականութիւնը պիտի ստիպէր հայերին այլ երկնքների տակ իրանց ապրուստի հոգացողութիւնը անել։ Յոյսը, նամանաւանդ ապագայ սահմանադրութեան յոյսն է, որ մտածել է տալիս իրերի ներկայ կացութեան յեղաշրջման, երբ ամենքի համար հաւասար լոյս պիտի ծագէ, երբ ամենքը հաւասար պիտի նկատվեն տէրութեան կամ հասարակութեան առաջ, երբ այլ ևս պարսիկ ամբոխը չի համարձակվի բռնութիւններ գործ դնել անհատների վրա՝ աւարի, թալանի մատնել ծախելու բերած մթերքները և հաւասար աչքով կը նայէ իր օտարադաւան հայրենակիցներին. այն ժամանակ միայն կարելի է ասել, որ Պարսկաստանը սահմանադրական պետութիւն դարձաւ։

Իբօ

ԱՐՏԱՔԻՆ ԼՈՒՐԵՐ

—

ՌՈՒՄԻՆԻԱ

Ռումինիայի վրայով սաւառնող յեղափոխութիւնը ներգործութիւն ունեցաւ և Պօտեմկինեան զրահանաւի նաւաստիների ճակատագրի վրա, որոնք օթևան էին գտել Ռումինիայում։

Երկար թափառելուց յետոյ այդ նաւաստիները, վերջապէս, իրանց համար աշխատանք գտան Ռումինիայի քաղաքներում և գիւղերում։ Նրանցից շատերը սկսեցին պարապվել արհեստներով։ Ընդհանրապէս, նրանք փոքր առ փոքր ընտելացան նոր կեանքի պայմաններին և արդէն արժամաններ էլ էին ձգել։

«Frank. Zeit» լրագրի վկայութեամբ, մնալով հաւատարիմ իրանց քաղաքական համոզմունքներին, նրանք, այնուամենայնիւ, իրանց զգուշեցին և հեռու մնացին ռումինական կեանքին միջամտելուց ու չը խախտեցին նրանց վրա տարածած հիւրասիրութեան իրաւունքները։ Չը նայելով դրան նաւաստիների խաղաղ գոյութիւնը Ռումինիայում շատերին անհանգիստ էր դարձել։

Ոստիկանութիւնը, ինչպէս ռումինական նոյնպէս և ռուսականը (գաղտնի), նրանց աչքից բաց չէր թողնում։

Երբ գիւղացիական շարժումը սկսվեց, նաւաստիներին մեղադրեցին շարժմանը մասնակցելու մէջ և կալանաւորեցին։ Թէև մանրակրկիտ քննութիւնը ցոյց տուեց, որ նրանք ոչ մի մասնակցութիւն չեն ունեցել ապստամբութեան գործում, այնուամենայնիւ նրանց արգելվեց այլևս մնալ Ռումինիայի սահմաններում։ Այդ կարգադրութիւնը որոշ միջնորդութիւնների դէպքում գուցէ և փոխվէր, սակայն մթնոլորտը այնքան էր կասկածելի դարձել, որ նրա մէջ ապրելը Պօտեմկինեան նաւաստիների համար այլևս անտանելի համարվեց։

Եւ նրանք մօտ օրերս «Adeverul» օրգանում տպագրել են հետևեալ յայտարարութիւնը. «Потемкинъ» զրահանաւի նախկին նաւաստիները որ ընդունակ արհեստաւորներ են և բոլորն էլ երիտասարդ ու առողջ, ուզում են անմիջապէս հեռանալ Ռումինիայից և դիմում են այն կոմմիսիօներներին, որոնք կարող կը լինէին նրանց տեղափոխել Ամերիկա»։

ԲՕԼԳԱՐԻԱ

Բօլգարիայի ներքին կեանքը, այս վերջին երկու տարվայ ընթացքում, կրում է խոր փոփոխութիւններ։ Այդ փոքրիկ երկիրը, որ պառլամենտական խաղաղ գործունէութեան մի դրախտ էր ներկայացնում, յանկարծ ալեկոծվում է։ Մի կողմից սօցիալիստ կազմակերպութիւնները աւելի ուժգնակի ազդում են երկրի վրա, միւս կողմից պահպանողական տարրերը փորձում են աւելի խոր գնալ, կանգնեցնելու համար ձախակողմեան առաջխաղացութիւնները։

Եւ պահպանողական կուսակցութիւնը ուզում է ձեռք մեկնել նոյն իսկ սահմանադրական ազատութիւններին։

Մինիստր-նախագահ Պետկովի սպանութիւնից յետոյ իշխանութեան գլուխ անցաւ Ազգային Ժողովի, պառլամենտի նախագահ Գուդէվը։ Նոր մինիստր-նախագահը սկսեց մի տենդոտ գործունէութիւն՝ զսպելու «յեղափոխական» տարրերին։ Ու մինիստրական խորհուրդում մշակվեց մի նոր օրինագիծ, որը խոշոր սահմանափակումներ է մտցնում խօսքի և մամուլի ազատութեան մէջ, և ներկայացվեց Ազգային Ժողովին, սօբրանիէին։ Այդ նոր օրինագծով ոչ միայն արգելքներ, դժուարութիւններ են յարուցվում հրատարակչական, խմբագրական գործում, այլ և կոչերի և ուղերձների հրապարակութեան մէջ։ Պէտք է այդ բոլոր խնդիրների համար այսուհետև դիմել ձեռնհաս իշխանութիւններին և թոյլտւութիւն ստանալ։

Ի հարկէ այդ նոր օրինագիծը Բուլգարիայի սահմանադրական ազատութիւններին հասցնում է զգալի հարուած։ Եւ դրա համար էլ, երբ նա ներկայացվեց սօբրանիէին, մարտ ամսի 12-ին, նիստը ստացաւ փոթորկալից բնաւորութիւն։ Ընդդիմադիր տարրերը բուռն կերպով քննադատեցին օրինագիծը և կռիւը այն աստիճան բանկվեցին, որ վիճաբանութիւնը, ընդհարումը խօսքի շրջանից անցաւ գործի շրջանը, տեղի ունեցաւ տուր ու դմփոց։

Պահպանողականների նեցուկ է համարվում ինքը, իշխան Ֆերդինանդը, որի դէմ էլ վերջին ժամանակներս մամուլը գործում էր խիստ արձակումներ։ Երևի դրա համար էլ կրճատում են մամուլի և խօսքի ազատութիւնը։

«ՄՇԱԿԻ» ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

ՊԵՏԵՐԲՈՒՐԳԻ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹԻՒՆԻՑ

26 ապրիլի

ԿՕՎՆՕ, 25 ապրիլի։ Երէկ երեկոյեան վաճառական Վայնէմանի բնակարանը մտան 10 զինված չարագործներ, որոնք պառկեցնելով Վայնէրմանին յատակի վրա, նրանք հանեցին նրա գրպանից բանալիները, բաց արին գանձարկղը, կորզեցին 50,000 ռուբլու տոկոսաբեր թղթեր և 1800 ռ. կանխիկ դրամ։ Սեղանի վրա թողնելով մի ինչ որ թիթեղեայ արկղիկ պայթուցիկ նիւթով, անյայտները փախան։ Վայնէրմանը թեթև վիրաւորված է երեսից և աչքից։

ԼՕՆԴՕՆ, 25 ապրիլի։ Համայնքների պալատ։ Պատասխանելով Հնդկաստանում տեղի ունեցող անկարգութիւնների հարցապնդման, Հնդկաստանի գործերի ստատս-սէկրէտար Մօրլէյը ասաց, որ հնդիկ կառավարութիւնը Հնդկաստանի հիւսիսում աստիճանաբար առաջ եկող յուզմունքների և շարժման առաջն առնելու անհրաժեշտութիւնը զգալով, կարգադրել է ձերբակալել և Պէնջաբից աքսորել երկու ամենավտանգաւոր ագիտատորի։

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 25 ապրիլի։ «Օրէնքների ժողովածուի» մէջ հրատարակված է, որ բարձրագոյն հաստատութիւն է գտել Պետական խորհրդի և Դումայի ընդունած օրէնքը՝ պետական գանձարանից 6 միլիօն ռուբլի յատկացնելու 1906 թ. անբերրիութիւնից վնասված տեղերի ազգաբնակութեան բժշկական—սննդական և բարեգործական ծախքերի համար։

ԼՕՆԴՕՆ, 26 ապրիլի։ Երէկ Գրուիչ հասած 22 ռուս սօցիալ-դեմօկրատներին ընդունեցին երկու ռուսներ, որոնք նրանց հասցրին Լօնդօնի գնացքը։ Սօցիալ-դեմօկրատները գնացքի մեկնելուց կէս ժամ առաջ գրաւելով վագոնների դռները և իջեցնելով վարագոյրները, չը կամեցան խօսակցել ժուռնալիստների հետ։ Այսօր սպասում են մնացած սօցիալ-դեմօկրատների գալստեան։

ԲԵՐԼԻՆ, 26 ապրիլի։ «Ալգեմէյնէ-Ցայտունգը» հաղորդում է, որ տարածված այն լուրերը, որ իբր Բիւլօվ և Վիլհէլմի միջև ծագած տարաձայնութիւնը կարող է կանցլերի ճգնաժամ ծնել, հիմքից միանգամայն զուրկ են։ Սխալ են նաև Բիւլօվի հիւանդութեան մասին պատմվող լուրերը, և որ իբր նա շուտով արձակուրդ կըստանայ։ Հաւանօրէն յուլիս ամսին նա, ինչպէս միշտ, կը մեկնէ Նօրտէրնէյ։

27 ապրիլի

ՄԻՆՍԿ, 26 ապրիլի։ Ռուսական ծայրադաւանի դաշնակցութեան կօմիտէտը մի կոչ է ուղղել ռուս ազգաբնակութեան, որով հրաւիրում է բոլոր քաղաքական համոզմունքներից ազատ մարդկանց միանալ։ Դաշնակցութեան նպատակն է—զարթեցնել Բէլօրա ազգաբնակութեան մէջ ազգային ինքնաճանաչողութեան զգացմունքը և ոգին, աջակցել խախտված ազգային շահերի պաշտպանութեանը, կազմակերպել տնտեսական ինքնօգնութիւն։

ԷՄԲԵՐԳ, 26 ապրիլի։ Երէկ երեկոյեան Անգլիա մեկնեցին 180 ռուս սօցիալ-դեմօկրատներ։

ՓԱՐԻԶ, 26 ապրիլի։ Ֆալիէռը պրինց Ֆուշիմայի շքախմբի բոլոր անդամներին շնորհեց քաջութեան նշանակներ։

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 26 ապրիլի։ Քաղաքում շարունակ խուզարկութիւններ են տեղի ունենում։

ՔԻՇԻՆԷՎ, 26 ապրիլի։ Լրագրական այն տեղեկութիւնները, որ իբր Օրգէեվսկի գաւառում տեղի են ունենում ագրարային շարժումներ, մտացածին են։ Սխալ է նաև այն լուրը, թէ նահանգապետը տեղական ռուս մարդկանց դաշնակցութեան 4000 ռուբլի նպաստ է տուել։

ՄՕՍԿՎԱ, 26 ապրիլի։ Այսօր, ռուս մարդկանց դաշնակցութեան համառուսական համագումարի բացման առիթով կայացաւ կրօնական թափօր, որին մասնակցում էին հազարաւոր մարդիկ։ Ներկայ էին Պետական Դումայի անդամներ Կրուշէվանը և Պուրիշկէվիչը, ինչպէս նաև վանական Իլիօդորը։ Թափօրը եկեղեցական պատկերներով դիմեց Ուսպէնսկի տաճարը, ուր Մօսկվայի միտրօպօլիտը հանդիսաւոր պատարագ մատոյց, ապա օրհնեց սրբերի պատկերները։ Նախքան եկեղեցի գնալը բռնվեցին միապետական կուսակցութիւնների 190 դրօշակներ։ Տաճարից գնացքը ուղղվեց Մօսկվայի փողոցներով դէպի Կարմիր կոչված հրապարակը։ Մինինի և Պօժարսկի արձանի մօտ հոգեհանգիստ կատարվեց հանգուցեալների յիշատակին, երգվեց «вѣчная помять»-ը։ Երբ գընացքը մօտեցաւ գեներալ-նահանգապետի տանը, գեներալ-նահանգապետը դուրս եկաւ պատշգամբ և բոլորի ցնծութեան գոչերով ողջակեց. «Կեցցէ Թագաւոր կայսրը»։ Ապա թափօրը վերադարձաւ կրկին առաջնորդարան։

ԿԻԵՎ,, 26 ապրիլի։ Օֆիցէրների խնայողական ընկերութեան խանութի նախասենեակում երկու անյայտ անձինք գլխին խփելով և շշմեցնելով գանձապահ օֆիցէրին, խլեցին նրանից 12000 ռուբլի և անյայտացան։ Օֆիցէրը կրակեց, սակայն անպտուղ։

ԼՕՁ։ Վաղվանից կաշխատեն Պօզնանսկու գործարանները, ուր աշխատում են 6600 բանւորներ։

Խմբագիր՝ ԱԼԷՔՍԱՆԴՐ ՔԱԼԱՆԹԱՐ
Հրատարակիչներ՝ ԹԱԳՈՒՀԻ ՏԻԳՐԱՆԵԱՆ
ԻՍԱՀԱԿ ՄԵԼԻՔ-ԱՂԱՄԱԼԵԱՆ

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

ԱՌԱՋԻՆ ՄԱՍՆԱՒՈՐ ՀԻՒԱՆԴԱՆՈՑ
ԲԺՇԿԱՊԵՏ Բ. ՆԱՒԱՍԱՐԴԵԱՆԻ
Հիմնված 1880 թ.
(Կուկիա, Վօրօնցօվի արձանի հանդէպ)
ամեն օր, բացի կիրակի օրերից
ԱՌԱՒՕՏՆԵՐԸ
Բ. Ա. ՆԱՒԱՍԱՐԴԵԱՆ—11—12 ժ. վիրաբուժութեան, վեներական (սիֆիլիս) մեզամաս. հ.։
Կ. Մ. ՉԻԿՕՎԱՆԻ—9½—10 ժ. աչքի, ներքին և ներվային։
Զ. Ի. ԲԱԲԱՆԱՍԵԱՆՑ—10—11 ժ. մանկաբարձութեան, կանանց և երեխայոց հ.։
Մ. Գ. ԱՒՍՏԻՍԵԱՆ—11—12 ժ. մորթու, վեներակ. վիրաբուժութիւն։
Ա. Մ. ՓՈՒՂԻՆՕՎ—12—1 ժ. ներքին և երեխայոց ծաղկահատ.։
Կ. Ի. ԳՁԵԼԻԵՎ—1—2 ժ. ականջի, քթի և կոկորդի
Ա. Գ. ՆԱՐԱՊԵՏԵԱՆՑ—1—1½ ժ. ներքին և երեխայոց։
ԿԻՆ-ԲԺԻՇԿ Ա. Ի. ՇՉԵՐԲԻՆԻՆԱ—1½—2 ժ. մանկաբարձութեան։
Վճարը 50 կ.։ Չքաւորները ձրի։ Համախորհրդի (կօնսիլիում) և օպերացիայի համար առանձին։
Հիւանդանոցի վերատեսուչ՝
Բժշկապետ՝ Բ. Նաւասարդեան

ԲԺՇԿԱՊԵՏ
Տ. ԳԷՈՐԳ-ԲԷԳԵԱՆ
ԱՉՔԻ ՀԻՒԱՆԴՈՒԹԻՒՆՆԵՐ
Ընդունելութիւնն ամեն օր
Առաւօտեան ժամի 9-ից մինչև 12
Երեկոյեան » 5-ից մինչև 7
Վէլեամինօվսկայա փողոց № 8.
(և. հ. շ.) 53—100

XXV ԱՂԲԻՒՐ XXV
և
XVIII ՏԱՐԱԶ-ԳԵՂԱՓՆՋԻԿ I

Հրատարակվում են ճոխ և բազմաբովանդակ։ Աշխատակցում են մեր անուանի մատենագիրներ, բանաստեղծներ, մանկավարժներ, արուեստագէտներ և լրագրողներ։ Կլիշէները պատկերների պատրաստվում են Եւրոպայի շնաւոր գործարաններում։ «ԱՂԲԻՒՐԸ» և «ՏԱՐԱԶ»,-«ԳԵՂԱՓՆՋԻԿԸ» տպագրվում են ընտիր թղթի վրա, էլլիւստրասիօնի մուրով, նորագոյն տառերով, զարդերով ու իրանց թանգագին յաւելուածներով, անակնկալ պրեմիաներով, տարեկան 5 ռ. բաժանորդագնով, (արտասահման 10 ռուբլի). հրապարակի վրա չունենք մրցակից։

Առանձին բաժանորդագրութիւն չէ ընդունվում։

ՏՈՒՆԸ մաքրում եմ փայտոջիլից (բաղլինջ) և երաշխաւոր եմ, որ երբէք չը լինի եթէ խորհրդիս հետևեն. տալիս եմ դեղ, որպէսզի ամառվայ ընթացքում ամիսը 1 անգամ քսել կահկարասիքի կասկածաւոր մասերին։ Դեղը 1 շիշը արժէ 60 կոպ.։ Սենեակները կարելի է մաքրել պաստառներ (обой) փոխելուց առաջ։ Հասցէս՝ Базарная ул. домъ Бархударова лавка Акопова, Артюшу Оганесову.
(շ. կ.) 1—2

ԵՐԿԱԹՈՒՂԱՅԻՆ ԳՆԱՑՔՆԵՐ
(Թիֆլիսի ժամանակով)

Թիֆլիսից դէպի Բագու	
Արագ	6 ժամ 58 ր. առաւօտ.
Մարդատար	9 » 3 » »
Պօստատար	8 » 34 երեկոյեան
Թիֆլիսից դէպի Բաթում	
Պօստատար	1 ժամ 21 ր. ցերեկվայ
Արագ	11 » 58 » գիշերվայ
Մարդատար	1 » 3 » »
Թիֆլիսից դէպի Բօրժօմ	
Մարդատար	9 ժամ 48 ր. առաւօտ.
»	3 » 8 » ցերեկվայ
Թիֆլիսից դէպի Երևան	
Մարդ ապրանք.	1 ժամ 43 ր. ցերեկվայ
Պօստատար	1 » 8 » գիշերվայ

Ժողովրդական համալսարանի Թիֆլիսի ընկերութեան հայկական սեկցեան սրանով յայտարարում է, որ հարկաւոր են ուսուցիչներ համալսարանի դասընթացների համար—մէկը հայոց լեզուի և միւսը թուաբանութեան համար։ Վարձատրութիւնը իւրաքանչիւր մի ժամ դասի համար մէկ ռուբլի։ Ցանկացողները թող դիմեն մինչև ապրիլի 28-ը հետևեալ հասցէով. Общество Армянскаго сельскаго хозяйства, лекціи народн. университетъ.

ԷԺԱՆԱԳԻՆ
գրադարանների Վարչութիւնը ձեռնարկելով գիւղական գրադարանների համար գրացուցակներ կազմելու գործը, սրանով դիմում է բոլոր հայ հեղինակներին, թարգմանիչներին և հրատարակիչներին, խնդրելով ուղարկել վարչութեան երկուական օրինակ իրանց գրքերից գրախօսելու և լաւագոյնները գրացուցակների մէջ մտցնելու։ Հասցէն՝ Тифлисъ, Вельяминовская ул. № 8. Дешевая библіотека-читальня.
(հ. շ.) 5—10

Հայոց Բարեգործական Ընկերութեան Վարչութիւնը,
յայտարարելով, որ առաջիկայ Զատկի տօնեբի առիթով շնորհակալութեամբ ընդունում է աղքատների համար նուէրներ դրամով, մթերքներով ամեն օր ցեր. ժամը 10-ից մինչև 2-ը ընկերութեան գրասենեակում (Абасъ-Абадская, домъ Худадова), խոնարհաբար խնդրում է բարեսիրտ ունևորներին օգնութեան հասնել թշուառներին։
6—6

„ՍՕՏՐՈՒԳՆԻԿ“
ՄԱՐԻԱՄ ՍՈՒՆԴՈՒԿԵԱՆԻ
Գրավաճառանոց
(Բագու, Օլգինսկայա № 9)
Ընդունում է ամեն տեսակ հրատարակութիւններ կոմիսիայով և պահեստի համար։ Պ. պ. հրատարակիչներին խնդրում ենք ծանօթանալու համար ուղարկել իրանց հրատարակութիւնները և պայմանները։
(շ.) 20—50

Լոյս տեսաւ
ՔԱՄԱԼԵԱՆՑ Ս-Ի
ԱԶԳԱՅԻՆ ԱՌԱԿՆԵՐ
գիրքը. Թուղթն ընտիր, տպագրութիւնը սիրուն, 112 էջ։
ԳԻՆՆ Է 25 ԿՈՊԷԿ
Հարցնել Թիֆլիսի գրախանութներում, ուր վաճառվում են նոյնպէս. 1) Խուլ Խաչիկ 25 կ.։ 2) Քաջ Աղասի 25 կ.։ 3) Ժամանակը ոսկի 40 կ.։ 4) Սրտից 9 պատմութիւն 40 կ.։ 5) Սասունցի Յովհան 30 կ.։ 6) Երկասիրութիւններ 50 կ.։ 7) Գալօ ափօ, Խաչան 12 կ.։ 8) Աստուած չը ճանաչող 10 կ.։ Շէն թագաւորի աղջիկ 25 կ.։ 11) Երկու աղբերացեղ 30 կ.։ 12) Հէքեաթներ 30 կ.։ 13) Անմեռ աշխարհ 8 կ.։ 14) Աստուած աղքատի կերպում 20 կոպէկ։
Մեծ գումարով գնողները դիմելու են Քամալեանց Ս-ին՝ Ներս. դպրանոց։
(և. հ. կ.) 14—20

ԿԷՍԸ ՅՕԳՈՒՏ ՀԱՅ ՍՈՎԵԱԼՆԵՐԻ
ՅԱՐՈՒԹԻՒՆ ԵՍԱՅԵԱՆԻ
„ԿԵԱՆՔԻ ԽՈՐՇԵՐԻՑ“
խոբր պատմուածք
ԳԻՆԸ 20 ԿՈՊ.
Միևնոյն Դպաղում
պատմուածք
հայ-թուրքական կռիւներից
պատկերազարդ
ԳԻՆԸ 7 ԿՈՊ.
1000-ական օրինակ. ծախվում է բացառապէս 100-ներով. զեղջ 25% և աւելի, ճանապարհածախսը գնողից. ստացուած փողի կէսը յօգուտ հայ սովեալների
Դիմել՝ Թիֆլիս, Городская Управа Յարութիւն Եսայեանին։ Հաշւետուութիւնը հրապարակօրէն։
ԿԷՍԸ ՅՕԳՈՒՏ ՀԱՅ ՍՈՎԵԱԼՆԵՐԻ
(կ. հ. շ.) 2—3

Լոյս տեսաւ և վաճառվում է
ԿԱՈՒՑԿՈՒ
Ներկայացուցչական Կառավարութիւն
գիրքը
Թարգմ. Ռ. Խան-Ազատի
Հեղինակի պատկերով, 240 երեսից բաղկացած
Արժէ 40 կոպ.
Դիմել «Գուտտենբերգ», «Փարոս» և «Образованіе» գրավաճառանոցներին։ Մեծ քանակութեամբ ցանկացողները կարող են դիմել և թարգմանողին, «Մշակի» խմբագրատուն։ Կը լինի սովորական զեղջ։ 5—5

ԲԱՑՎԱԾ Է ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ
1907 Թ.
„ՄՈՒՐՃ“
Գրական, հասարակական և քաղաքական
ԱՄՍԱԳԻՐ
(Նոր շրջան VII տարի)
ԲԱԺԱՆՈՐԴԱԳԻՆ
Ռուսաստանի և Պարսկաստանի համար՝ տարեկան 10 ռ., կէս տարին 6 ռ., ամսական 90 կ.
Արտասահմանի համար՝ տարեկան 12 ռ. (32 ֆ.), կէս տարին 7 ռ. (18 ֆ.), ամսական 3 ֆ

Բաժանորդագինը կարելի է վճարել նաև մաս-մաս (5—5 ռ.). երկրորդ վճարը լինում մայիսին։ Տարր. դպրոցներում ուսուցանողների, աշակերտների, ուսանողների, գիւղացիների և բանւորների համար բաժանորդագինն է (Ռուսաստ.) 8 ռուբլի տարեկան, որ կարելի է վճարել մաս-մաս (4—4 ռ.)։

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆԸ ԸՆԴՈՒՆՎՈՒՄ Է
Թիֆլիսում—խմբագրատանը (Ճավճավաձեան փողոց, տ. № 12) և «Գուտտենբերգ» գրախան. (Երևան. հրապ.) և «Новая Рѣчь» գրախան. (Գօլօվինսկի պրօսպ. Թատր. դիմաց)։
Կայսրութեան այլ տեղերից պէտք է դիմել՝ Тифлисъ, въ редакцію журнала «МУРЧЪ»։
Արտասահմանից՝ Tiflis, Rèdactio de la revue «MURTCH».

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆ ընդունվում է ամեն լեզուով։ Յայտարարութիւնների համար վճարում են.—1 երես բոլոր յայտարարութեան համար 10 ռ., ½ եր. 5 ռ., ¼ եր. 2 ռ., տողատեղ (կօրպուս) 40 կ.։
20—0 Խմբագիր՝ Լևոն Սարգսեան

ՀԱՅԵԼԻ
Գեղարուեստական երգիծաբանական պատկերազարդ
ՇԱԲԱԹԱԹԵՐԹ,
որը երբեմնապէս լոյս կը տեսնի «Հայելիի յաւելուած» անուան տակ։
Տարեկան բաժանորդները կը ստանան՝
1) 50 № «Հայելի»։ 2) 12 գեղարուեստական ճկարներ, որ տարվայ վերջը առանձին ալբոմ կը կազմեն։ 3) 2 մեծադիր գունաւոր պատկեր հայկական կեանքից (75×100 սմ.) (Առաջին պատկերը կուղարկվի Զատկական համարի հետ, իսկ երկրորդը սեպտեմբերի սկզբին)։ 4) 1 պատ տախտակ պատկերազարդ Օրացոյց 1908 թ.։ 5) 1 յայտնի հայ երգիծաբանների խմբական ճկար։
Բաժանորդագրութեան տարին է նոյեմբերից նոյեմբեր։
Տարեկան գինը պրեմիաներով Թիֆլիսում՝ 4 ռ., դուրսը՝ 5 ռուբ.։ Կէս տարին՝ 2 ռ. դուրսը՝ 2 ռ. 50 կոպ.։ Արտասահման՝ տարեկան 6 ռուբլի, կէս տարին 3 ռուբլի։

ԱՌԱՆՁԻՆ ՀԱՄԱՐԸ ԱՄԵՆ ՏԵՂ, ԹԷ ԹԻՖԼԻՍՈՒՄ ԵՒ ԹԷ ԳԱՒԱՌՆԵՐՈՒՄ ԱՐԺԷ 10 ԿՈՊԷԿ

Մինչև այժմ լոյս են տեսել և ուղարկվել բաժանորդներին հետևեալ գեղարուեստական նկար պրեմիաները. 1) Հաւատ-յոյս-սէր 2) Առատութիւն և 3) Խաղաղութիւն Նոր բաժանորդները կը ստանան բոլոր լոյս տեսած համարները և պրեմիաները։ Պատրաստվում է տպագրութեան համար. 1) Գեղարուեստական նկար պրեմիա № 4—ՓԵՐԻՆԵՐ և զատկական պրեմիան մեծադիր գունաւոր, (14 գոյներով) 75—100 սանտիմ մեծութեամբ, ընտիր թղթի վրա, շքեղ նկարը—ՍԱԹԵՆԻԿ ԵՒ ԱՐՏԱՇԷՍ Բ.։
ԾԱՆՕԹ.—Գեղարուեստական ճկար պրեմիաներ առանձին արժեն հատը 50 կոպէկ. Մեծադիր գունաւոր ճկար պրեմիան 3 ռուբլի։
Հասցէն՝ Тифлисъ, Редакція «Аели», Дворцовая ул. № 3 կամ iflis, Rédaction du Journal «Haeli»։ Լոյս է տեսնում հինգշաբթի օրերը։
Խմբագիր՝ Վ. Պետրոսեան, Հրատարակիչ՝ Բ. Ճէպլէյեան
(եր. հինգշ. և շաբ.) 20—40

Տպարան «Հ Ե Ր Մ Է Ս» Ընկ.
Электропечатня Типографскаго Т—ва. «ГЕРМЕСЪ» Мадатовская № 5. Телефонъ № 352